

# ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Հանրակրթական դպրոցների համար

2009 – 2010 ուսումնական տարի

2009 թվական

## Ազգային ուսումնական պլանի տվյալ և նախկին հրատարակումների վրա աշխատել են

Նիկա Գվարամիա	Աննա Մյետիձե	Մարիամ Մետրևելի	Գիորգի Գեգենավա
Գիորգի Նողիա	Մարիամ Բերձենիշվիլի	Թամար Մեիփարիանի	Բեսիկ Լորքքիփանիձե
Ալեքսանդրե Լոմաիա	Իրիանա Սամսոնիա	Ամիրան Սվինոնիշվիլի	Թեա Պաիճաձե
Բելա Ծիփուրիա	Նինո Միժիշվիլի	Վասիլ Կաճարավա	Թամար Ջաղելի
Գիգի Թևզաձե	Վախթանգ Պատարիձե	Թեո Ջալաղանիա	Բեսիկ Լորքքիփանիձե
Սիմոն Ջանաշիա	Մայա Բիժաձե	Գիորգի Յագարեիշվիլի	Նանա Խեցուրիանի
Դոդո Սալաղաիա	Գեգի Վասաձե	Նաթիա Դաթուաշվիլի	Վիոլետա Կուպրեիշվիլի
Թամար Ջաղելի	Ժանա Քոխավա	Իվանե Մինդաձե	Լուբա Գոգիավա
Թաթիա Պաճկորիա	Իանգե Ամիրիձե	Թեա Բերուլավա	Լամարա Չինչալաձե
Ջաքոբ Գիումաշվիլի	Նիկա Մալազոնիա	Դավիթ Մալազոնիա	Խաթունա
Լաշա Կոկիլաշվիլի	Դավիթ Լորքքիփանիձե	Էկա Կաճարավա	Կոպալեիշվիլի
Էկա Կորձաձե	Նաիրա Բեպիևա	Գիորգի Կվանտալիանի	Նաթիա Չխենկելի
Գիորգի Ջեղզիհիձե	Ալեքսանդր Միլնիկով	Իրակլի Լոմինաձե	Թոռնիկե Էրիսթավի
Նանա Դավաթիշվիլի	Ռոստոմ Խոմերիկի	Ջալա Սալուքվաձե	Էկա Թափլաձե
Անի Քիտիաշվիլի	Ջուրաբ Կինաձե	Ալեքսանդրե Դոնդաձե	Մալխազ Մաղաշվիլի
Նինո Դոբորջզիհիձե	Մամա Ջազա Թևզաձե	Ավթանդիլ	Իրինե Ջալաղանիա
Բուբա Օչխաուրի	Վիլի Գրիգորյան	Սագինաշվիլի	Մայա Ինասարիձե
Ռոստոլան	Թինաթին Բոճորիշվիլի	Դավիթ Նատրոշվիլի	Դավիթ Գոգելիձե
Թաղաիշվիլի	Նողար Լադարիա	Թենգիզ Բուչուկուրի	Գիա Նոզաձե
Էկա Սլովինսկի	Նինո Բեսելիա	Ջազա Թևդորաձե	Մայա Կիկնաձե
Նաթիա Մաղինաձե	Նանա Իաշվիլի	Գիորգի Լազրիշվիլի	Գիորգի Բերձենիշվիլի
Մարիկա Կապանաձե	Լևան Ռամիշվիլի	Դավիթ Կերեսելիձե	Վասիլ Գաբունիա
Թեա Բերձենիշվիլի	Իվանե Բոկերիա	Նողար Էլիզբարաշվիլի	Մայա Գողևանիշվիլի
Շորենա Սաձազիշվիլի	Գյուլնազ Ազաևա	Մայա Բլիաձե	Գվանցա Չխենկելի
Մզիա Ծերեթելի	Գիա Մաչաթելի	Նատա Սուրմավա	Լանա Սալաղաիա
Գիորգի Գախելաձե	Նինո Գոգուաձե	Տարաս Շավիշվիլի	Նեստան Ցիցիշվիլի
Մանանա Ռատիանի	Ավթանդիլ Գագնիձե	Նինո Նակուղաշվիլի	Ռոստոլան Ղիփիանի
Գյուլնարա Չխիկվաձե	Ավթանդիլ Արաբուլի	Նիկոլոզ Չուբինիձե	Կախա Գաբունիա
Մարիկա Միխարուիձե	Թամար Լոմիձե	Իանինա Գիգիբերիա	Լևան Ախվեղիանի

**Շնորհակալություն ենք հայտնում Վրաստանի բոլոր ուսուցիչներին, հրատարակողներին և կրթության բնագավառում ընդգրկված բոլոր մարդկանց, որոնք մասնակցել են նախորդ խմբագրումների քննարկմանը և մեզ հետ կիսվել իրենց կարծիքներով:**

Վրաստանի ուսուցիչներին և դպրոցների տնօրինություններին  
ներկայացուցիչներին



Հարգելի գործընկերներ,

ներկայացնում ենք Ազգային ուսումնական  
պլանի չորրորդ հրատարակությունը, որը ձեռ  
կօզնի 2009-2010 ուսումնական տարին  
պլանավորել ճիշտ՝ ելնելով աշակերտների  
կրթական և սոցիալական անհրաժեշտու  
թյուններից: Արդեն չորրորդ տարին է, ինչ Ազգային  
ուսումնական պլանը ներդրվում է Վրաստանի  
բոլոր դպրոցներում: Հատկանշական է , որ այս  
չորս տարվա ընթացքում, ձեզ հետ  
համագործակցության հիման վրա, այն  
նշանակալիորեն լրացվել է և կատարելագործվել:

Այս տարվա ուսումնական պլանն ընդգրկում է

մի քանի նշանակալի փոփոխություններ: Մասնավորապես, կատարելագործվել է  
աշակերտներին ավարտական վկայականներ և մեդալներ հատկացնելու կարգը, մշակվել են  
բացակայությունների հետ կապված հրահանգներ, ինչը, համոզված ենք, որ մեզ կօզնի ավելի  
պատճառաբանել աշակերտներին: Փոխվել է բնական և հասարակական գիտությունների  
դասավանդման կառուցվածքը: Վերացվել է բնական գիտությունների եռամսյակային  
դասավանդումը: Համապատասխանաբար, նշանակալիորեն աճել է ուսուցման ծավալը երեք  
բնական գիտություններից էլ: Հասարակական գիտությունները այլևս չեն դասավանդվում 7-  
րդ և 10-րդ դասարաններում ինտեգրված, իսկ 10-րդ դասարանում՝ եռամսյակային ուսուցումով:  
Կատարելագործվել են նաև ուսումնական պլանի պահանջները դասագրքերի ընտրության և  
օգտագործման հարցում: Նոր օրենքի համաձայն՝ ընտրված դասագրքերի օգտագործման  
ժամկետն ավելացել է մինչև 5 տարի:

Գեռևա շարունակվում է առարկայական ծրագրերի կատարելագործումը և զարգացումը:  
Այս հրատարակման մեջ դուք կծանոթանաք օտար լեզվի ուսումնական պլանի վերամշակված  
տարբերակին, որը հիմնվում է լեզվական իրազեկությունների զարգացման Եվրոպայում  
ընդունված գծապատկերին: Նորություն են նաև 4-րդ դասարանի առարկայական  
չափորոշիչները, որոնք 2009-2010 ուսումնական տարում առաջին անգամ են ներդրվելու:

Նշանակալի է նրա իմաստավորումը, որ Ազգային ուսումնական պլանն ուսուցիչների հետ  
սերտ համագործակցությամբ է հղկվում: Հենց ուսուցիչների կարծիքը և ուսուցիչների  
պատրաստակամությունն է վճռականը նորությունների արդյունավետ ներդրման համար:

Ձեզ խնդրանքով ենք դիմում՝ որքան հնարավոր է մանրամասնորեն ծանոթանաք Ազգային  
ուսումնական պլանին, ընդգրկվեք նրա քննարկումներին, գրեք մեզ ձեր կարծիքները,  
դիտողությունները և բարելավման ուղիները:

Հաջողություններ են ցանկանում:

Հարգանքներով՝

Նիկա Գվարամիա














Կրթության և գիտության նախարար

2009 թվականի հունիսի 17

A handwritten signature in black ink, appearing to be 'Nika Gvaramya', written in a cursive style.

## Ցանկ

Ներածություն .....	Ներած.-5
Գլուխ I. Ուսանման և ուսուցման հիմնական սկզբունքները .....	Ներած.-6
Կրթական գործընթացի կազմակերպում .....	Ներած.-6
Դպրոցական ուսումնական պլան .....	Ներած.-12
Գնահատման սկզբունքները .....	Ներած.-16
Մեթոդիկայի հիմնական կողմնորոշիչները .....	Ներած.-25
Պարտադիր և կամընտրական առարկաներ .....	Ներած.-31
Պարտադիր առարկաների դասավանդումն աստիճանների համաձայն ...	Ներած.-35
Առարկաների ժամային բաշխման հիմնական սկզբունքները .....	Ներած.-39
Գլուխ II. 2009-2010 ուսումնական տարում գործող ժամային ցանցը...	Ներած.-43
Գլուխ III. Առարկայական ծրագրեր	

	Վրացերենը, որպես երկրորդ լեզու
	Հասարակական գիտություններ
	Կերպարվեստ և կիրառական արվեստ, աշխատանքային ուսուցում
	Երաժշտություն
	Ֆիզիկական դաստիարակություն
	Մաթեմատիկա
	Բնագիտական գիտություններ
	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ
	Օտար լեզուներ
	Օտար լեզուների ծրագրի բովանդակությունը
	Ֆրանսերեն
	Գերմաներեն
	Անգլերեն
	Ռուսերեն

## Ներածություն

Տվյալ հրատարակումն ընդգրկում է 2009-10 թվականի համար հաստատված Ազգային ուսումնական պլանը: Ուսուցիչների, դպրոցների տնօրինությունների թե այլ հետաքրքրվող անձանց համար հաստատված մասին կցված են մեկնաբանություններ և հնարավոր հիմնախնդիրների վճռման ուղիներ: Ազգային ուսումնական պլանը կազմած է 2004 թվականի ընդհանուր կրթության ազգային նպատակների հիման վրա: Նրա ներդրումը Վրաստանում սկսվել է 2006-07 ուսումնական տարվանից: Այդ տարի ուսումնական պլանը մտավ առաջին, յոթերորդ և տասներորդ դասարաններ բոլոր վրացալեզու դպրոցներում: 2007-08 տարվանից Վրաստանի բոլոր դպրոցները սովորում են նոր ուսումնական պլանով: Ներդրմանը նախորդում է նրա հիմնավոր ուսումնասիրություն և փորձարկում 100 վրացալեզու և 30 ոչ վրացալեզու դպրոցներում: Այս հրատարակման համար դպրոցների ծրագրերի 5/6-ն արդեն նոր Ազգային ուսումնական պլանի վրա է հիմնվում:

Միևնույն ժամանակ, դասագրքերը կազմելու գործընթաց է ընթանում: Այս հրատարակման համար արդեն դասագրքերի նորացման երկրորդ փուլ է սկսվել, երբ կատարելագործվել են արդեն նոր ուսումնական պլանների համաձայն կազմած, մեկ անգամ արդեն երաշխավորության կնիք-մակագրություն ստացած դասագրքերը: Այս դասագրքերը, որպես նշանակալի ռեսուրս, կօգնեն ուսուցչին դասավանդել նոր ուսումնական պլանով:

Ընդլայնվում է նոր Ուսումնական պլանի կիրառության տարածքը: Այս ուսումնական պլանի վրա են հիմնվում ուսուցիչների մասնագիտական չափորոշիչները, համապատասխան հավաստագրման պահանջները և դիմորդների համար բարձրագույն ուսումնական հաստատությունների քննությունների ծրագրերը: Դպրոցների լիազորագրման կարևորագույն չափանիշն էլ հենց Ազգային ուսումնական պլանի պահանջների որակյալ կատարումն է: Ազգային ուսումնական պլանի հիման վրա են ստեղծվում նաև ուսուցիչների նախապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրերը:

**Ուշագրավ փոփոխություններ նախորդ խմբագրությունների համեմատ.**

**Ավելացել են նոր ուսումնական ծրագրեր 4-րդ դասարանում** Առարկայական պլաններ են ավելացել 4-րդ դասարանի համար: Այս ծրագրերը նախորդ դասարաններում հրապարակած առարկայական ծրագրերի տրամաբանական շարունակությունն են:

**Ավելացել են նորացված ուսումնական ծրագրեր 10-րդ դասարանում** Այնպիսի առարկաներից, ինչպիսիք են՝ բնագիտություն, երաժշտություն, կերպարվեստ և կիրառական արվեստ, աշխատանքային ուսուցում նորացվեցին 10-րդ դասարանի ուսումնական ծրագրերը:

**Ստեղծվեց նոր ուսումնական պլան օտար լեզվից** Օտար լեզվի նոր ուսումնական պլանը համապատասխանում է Եվրախորհրդի սահմանած մակարդակներին և նշված է, թե ուսուցման որ աստիճանն է համապատասխանում եվրաչափորոշիչի այս կամ այն մակարդակին:

**Ստեղծվել են մաթեմատիկայի կումուլյացիոն արդյունքներ**

Մաթեմատիկայի առարկայական ծրագրին ավելացել են կումուլյացիոն արդյունքներ բազային և միջնակարգ աստիճանի համար:

**Փոխվել է բնագիտության և հասարակական գիտությունների դասավանդման գծապատկերը** Բնագիտական առարկաները և նաև պատմությունը և աշխարհագրությունն այլևս չեն դասավանդվում եռամսյակային սկզբունքով: Հասարակական գիտությունների ինտեգրված ուսուցումն այլևս պարտադիր չէ 7-րդ և 8-րդ դասարաններում:

**Բացակայությունների և դասդեկի պարտականություններ հետ կապված՝ ներմուծված են նոր կանոններ**

Դասդեկը վերահսկում է աշակերտների հաճախումը և առաջադիմությունը: Հաճախումից է կախված, թե որքանով պարտավոր կլինի աշակերտը էքստենսատի ձևով հավաստել ստացած կրթությունը:

**Փոխվել են դասագրքերի ընտրության պայմանները**

Դպրոցում դասագրքի գործելու ժամկետը դառնում է 5 տարի: Հղկվել են դասագրքերի ընտրության ընթացակարգերը:

**Կատարելագործվել է ավարտական վկայականների և մեդալների հատկացման կարգը**

Տվյալ հրատարակումը բախնդերների համար է նախատեսված: Յուրաքանչյուր դպրոց հնարավորություն կունենա ամբիոնների համաձայն բաշխել նոր ուսումնական ծրագրերը և դրանք էջադրել բախնդերներում:

## Գլուխ I. Ուսանման և ուսուցման հիմնական սկզբունքները

### Կրթական գործընթացի կազմակերպումը

#### Հանրակրթական դպրոցների աստիճանները

Ընդհանուր կրթությունը դպրոցում բաժանվում է երեք աստիճանների՝ տարրական, բազային և միջնակարգ աստիճաններ: Տարրական աստիճանն ընդգրկում է I-VI դասարանները, բազայինը՝ VII-IX, իսկ միջնակարգը՝ X-XII դասարանները: Դպրոցում պարտադիր կրթությունն ընդգրկում է I-IX դասարանները:

Տարրական աստիճանի հիմնական խնդիրներն են.

- Աշակերտի համար հիմք ստեղծել հաջորդ՝ բազային աստիճանում, արդյունավետ ուսանման համար:
- Աշակերտի համար պայմաններ ստեղծել սեփական մտավոր, ֆիզիկական, թե հոգեկան հատկանիշների ու հակումների դրսևորման ու զարգացման համար:
- Աշակերտի համար պայմաններ ստեղծել՝ տեղեկատվություն ձեռք բերելու և այն հմտություն-կարողությունների և վերաբերմունքների զարգացման համար, որոնք նրան անհրաժեշտ են լինելու ողջ կյանքի ընթացքում:

Բազային աստիճանի գլխավոր խնդիրներն են.

- Աջակցել աշակերտներին՝ հասնելու ընդհանուր կրթության ազգային նպատակների փաստաթղթում նկարագրված կրթական գաղափարներին:
- Նախապայմաններ ձևավորել աշակերտների ապագա ընտրության համար. մտադի՞ր է արդյոք ապագայում շարունակել ուսումը և, եթե այո՝ ի՞նչ ձևով:
- Աշակերտի համար պայմաններ ստեղծել՝ լրատվության, հմտություն-կարողությունների և վերաբերմունքների զարգացման համար՝ ողջ կյանքի ընթացքում:

#### Հինգ հիմնական նորույթ Ազգային ուսումնական պլանում

- ❖ Հաշվի են առնված աշակերտի ֆիզիկական և հոգեկան կարողությունները և տարիքին համապատասխան հետաքրքրությունները:
- ❖ Ուսանել նշանակում է տեղեկատվության հավաքում, հմտություն-կարողությունների և վերաբերմունքների զարգացում:
- ❖ Ուսուցումը ենթադրում է ոչ թե մեկ կոնկրետ ճանապարհի անցում, այլ մանկավարժի և աշակերտի կողմից համատեղ ընտրված լավագույն տարբերակի որոնում:
- ❖ Գլխավոր կողմնորոշիչը դառնում է ոչ թե գիտելիքի քանակը, այլ՝ որակը:

**Միջնակարգ աստիճանի գլխավոր խնդիրներն են՝**

- Աշակերտի համար ստեղծել ընդհանուր կրթության ազգային նպատակների փաստաթղթում նկարագրված գաղափարների կատարելագործման պայմաններ:
- Աշակերտի համար ստեղծել միջազգային չափորոշիչներին համապատասխան կրթություն ստանալու պայմաններ:
- Աշակերտի համար ստեղծել պայմաններ, որպեսզի նա կարողանա ճիշտ ընտրել իր ապագա զարգացման ուղին (շարունակի ուսումը բարձրագույն հաստատությունում կամ ընդգրկվի աշխատանքային գործունեության մեջ):

**Ազգային ուսումնական պլանի ներդրումը.**

**Ազգային ուսումնական ծրագրի փորձարկման և ներդրման կարգացուցակը**

Ուսումնական տարի	Տարրական						Բազային			Միջնակարգ		
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
2005-2006	A1/ X	X	X	X	X	X	B1/X	X	X	C1/X	X	
2006-2007	A/Y 1	A1/X	X	X	X	X	B/Y1	B1/X	X	C/Y1	C1/X	
2007-2008	Y	A/Y1	A1/X	X	X	X	Y	B/Y1	B1	Y	C/Y1	
2008-2009		Y	A/Y1	A1/X	X	X		Y	B/Y1	B1/C	Y	C/Y1
2009-2010			Y	A/Y1	A1/X	X			Y	B/Y1	B1/C	Y
2010-2011	ճ			Y	A/Y1	A1/X				Y	B/Y1	B1/C
2011-2012		ճ			Y	A/Y1	A1/B				Y	B/Y1
2012-2013			ճ			Y	A/Y1	A1/B				Y
2013-2014				ճ			Y	A/Y1	A1/B			
2014-2015					ճ			Y	A/Y1	A1/B		
2015-2016						ճ			Y	A/Y1	A1/B	
2016-2017							ճ			Y	A/Y1	A1/B
2017-2018								ճ			Y	Y1
2018-2019									ճ			Y

\* Ազգային ուսումնական պլանը պետք է փորձարկվի և ներդրվի ոչ ուշ, քան Ազգային ուսումնական պլանի փորձարկման և ներդրման կարգացուցակում նշված վանդակում կամ սյունակում տրված ուսումնական տարվա վերջը:

X - Առկա, հին ուսումնական պլան

A1, B1, C1- Նոր ազգային ուսումնական պլանի փորձարկումը վրացալեզու դպրոցներում:

Y1 Նոր ազգային ուսումնական պլանի փորձարկումը ոչ վրացալեզու դպրոցներում:

A, B, C - Նոր ազգային ուսումնական պլանի ներդրումը վրացալեզու դպրոցներում (դպրոցներ և մասնաճյուղեր):

Y- Նոր ազգային ուսումնական պլանի ներդրումը ոչ վրացալեզու դպրոցներում (դպրոցներ և մասնաճյուղեր):

Տ - Չևափոխված տարբերակ:

Ոչ վրացալեզու ուսուցման հանրակրթական հաստատությունները (հանրակրթական հաստատություններ և մասնաճյուղեր) Ազգային ուսումնական պլանով 12-ամյա հանրակրթական ուսուցման ամբողջությամբ անցնում են ոչ ուշ, քան 2009–2010 ուսումնական տարվա վերջում: Այս հաստատությունների կողմից լրիվ միջնակարգ կրթության ավարտական վկայական 11-րդ դասարանի կրթական ծրագրի յուրացման հիման վրա տրվում է միայն 2007-2008 ուսումնական տարվա վերջում:

## Օրացույց

Ուսումնական տարին նախատեսում է երեք երրորդական կամ երեք եռամսյակ: Սա ավելի մեծ հնարավորություն է տալիս միջանկյալ գնահատումների համար, ինչն, իր հերթին, նպաստում է ուսման որակի բարձրացմանը: Ուսումնական տարին տևում է առնվազն 180 ուսումնական օր (մոտավորապես 36 շաբաթ): Եռամսյակը տևում է 12 շաբաթ: Անհրաժեշտության դեպքում, թույլատրելի է վեցօրյա ուսումնական շաբաթը, սակայն, ընդհանուր առմամբ, ենթադրվում է հնգօրյա ուսումնական շաբաթ:

## Աշակերտների թիվը

Երաշխավորված է, որ աշակերտների թիվը դասին չգերազանցի 25-ը, իսկ մանկավարժը պետք է ընդհանուր հաշվով չունենա 125-ից ավելի աշակերտ: Աշակերտների առավելագույն թույլատրելի թիվը դասարաններում 30 է: Դա երկուստեք կապաշտպանի ինչպես աշակերտին, այնպես էլ՝ ուսուցչին: Աշակերտներին կտրվի սահմանափակ քանակությամբ դասարաններում ավելի լավ սովորելու հնարավորություն: Իսկ մանկավարժն այս համակարգով կունենա աշակերտների այնպիսի առավելագույն թիվ, որը նրան կընձեռի ուսումնական գործընթացը պատշաճորեն պլանավորելու և իրականացնելու հնարավորություն:

Աշակերտների առավելագույն թիվը սահմանող կարգը վերաբերում է միայն 2005-2006 ուսումնական տարում դպրոց եկած առաջին դասարանցիների կազմակերպմանը և յուրաքանչյուր հաջորդ սերնդին (այսինքն՝ 2007-08 ուսումնական տարում



վերաբերում է առաջին, երկրորդ և երրորդ դասարանցիներին և այլն): Ավելի բարձր դասարաններում դպրոցները կարող են այս կարգը ներմուծել միայն այն դեպքում, եթե այս գործողության արդյունքում, դպրոցից չեն ազատվի աշակերտներ կամ ուսուցիչներ:

Փոքր քանակակազմով դպրոցներում հաճախ են կազմակերպվում համալրված դասարաններ: Մեզ մոտ գոյություն ունեցած կրթական ավանդույթի համապատասխան համալրված դասարանների ստեղծումը նպատակահարմար է միայն երկու տարիքային խմբերի միավորումով և այն էլ այն դեպքում, եթե միասնաբար աշակերտների թիվը չի գերազանցում 20-ը: Համալրված դասարանները հիմնականում կազմակերպվում են I-III, II-IV դասարանների միավորումով: Երկուսից ավելի դասարանների միավորումը համալրված դասարանների մեջ հնարավոր է նշանակալիորեն վնասի ուսումնական գործընթացին, և դասարանը չկարողանա հասնել ուսումնական պլանով նախատեսած արդյունքներին:

## Աշակերտների բաժանումը՝ ըստ ուժեղության

Անթույլատրելի է դասարաններում աշակերտների ստորաբաժանումը՝ ուժեղության համաձայն, այնպես, ինչպես և անթույլատրելի է՝ հանրային դպրոցը դպրոցում սովորելու ընդունի տաղանդավոր, բանիմաց որևէ աշակերտի և մյուսներին մերժի ընդունել: Տարբեր ընդունակության և իմացության աշակերտները դասերի ժամանակ համալրում են միմյանց և օգնում իրար՝ նոր փորձ ձեռք բերելու հարցում և, համապատասխանաբար, դառնում ոչ միայն առավել գիտակներ, այլև ձևավորվում են որպես լավագույն քաղաքացիներ:

## Ընդհանուր կուլտուրայի ձևավորմանը նպաստելը

Որպեսզի յուրաքանչյուր աշակերտ ունենա իր բոլոր հասակակիցների հետ առավել լավ ծանոթանալու հնարավորություն, ցանկալի է տարվա վերջին միացնել զուգահեռ դասարանների աշակերտներին: Դա կնպաստի այն բանին, որ չկազմավորվեն աշակերտների փոքր-փոքր խմբեր, որոնք միասին գտնվելու դեպքում հաճախակի խոչընդոտում են դասի ընթացքը: Ոչ պակաս նշանակալից է նաև այն, որ այս համակարգում աշակերտը փոխի իր ուսուցչին: Իսկ դա նպաստում է տարբեր ոճի ուսուցմանը նրան հաղորդակից դարձնելուն: Այս կարգը պարտադիր չէ, սակայն՝ երաշխավորված է, առանձնապես բազային և միջնակարգ աստիճաններում:

Որպեսզի աշակերտներն ունենան մյուս խմբերում սովորող իրենց հասակակիցների հետ առավել լավ ծանոթանալու հնարավորություն, ցանկալի է, որ դպրոցը նպաստի մարզական, արվեստաբանական կամ ակումբային ակտիվություններին, որտեղ միավորված կլինեն տարբեր ենթաբաժինների աշակերտներ:

## Դասղեկական ծրագիր

Բոլոր դասարաններն ունեն իրենց դասղեկները: Ցանկալի է, որ դասղեկը դասավանդի իր դասղեկական դասարանին:

## Դասուկեր պարտավոր է.

- ❖ Օգնել աշակերտներին ակադեմիական թե այլ հիմնախնդիրների կարգավորման գործում:
- ❖ Հիմնախնդիրների առկայության դեպքում՝ աշակերտի, ծնողների և ուսուցիչների միջև կատարել բարեխոսի դեր:
- ❖ Առնվազն ամիսը մեկ անգամ ծնողներին իրազեկել նրանց զավակների ակադեմիական առաջադիմության մասին:
- ❖ Իր դասղեկական դասարանի աշակերտների հաճախումն ամեն օր ստուգել և աշակերտների հաճախման մասին տեղեկությունն ամեն օր արտացոլել դպրոցի պաշտոնական փաստաթղթում:
- ❖ Աշակերտի հարգելի բացակայության վերաբերյալ ստացած տեղեկագիրն արտացոլել դպրոցի պաշտոնական փաստաթղթում:
- ❖ Այս պլանով նախատեսած այլ պարտականություններ կատարել:

Դասուկն անհատական հանդիպումների ժամանակ ծնողներին պետք է ծանոթացնի նրանց զավակների ուսման առաջադիմության հարցերը: Անթույլատրելի է մի աշակերտի վարքի և ակադեմիական առաջադիմության մասին զրուցել երկրորդի ծնողի հետ կամ նրա ներկայությամբ: Եթե աշակերտը բացակայում է դպրոցից, դասուկը պարտավոր է յուրաքանչյուր նման դեպքում պարզել դրա պատճառը: Այս ամենին հասնելու համար անհրաժեշտ է, որ դասուկը առարկաների մանկավարժներից պարբերաբար տեղեկանա իր դասղեկական դասարանի աշակերտների ակադեմիական առաջադիմության, անհատական հիմնախնդիրների թե ընդհանուր հաջողությունների մասին: Դասուկը պատասխանատու է նաև ամեն մի եռամսյակի և տարվա վերջում իր դասղեկական դասարանի աշակերտների թվանշանների՝ դպրոցական թվանշանների թերթիկում ժամանակին և ճշգրիտ մտցնելու համար, որտեղ տեղի է ունենում այս թվանշանների հաշվառումը:

Ուսումնական տարին ավարտելիս՝ դասուկն անհատականորեն պետք է անի դասղեկական դասարանի յուրաքանչյուր աշակերտի գնահատականների, հաճախման և վարքի վերլուծություն: Դպրոցը պարտավոր է պահպանել կազմած վերլուծության գաղտնիությունը: Այն դեպքում, եթե աշակերտի տարեկան միջին գնահատականը ցածր է 5.5-ից, դասուկը պարտավոր է զգուշացնել ծնողին կամ աշակերտին հաջորդ տարիներում աշակերտի կողմից (եթե սա աստիճանի վերջին դասարանը չէ) նշանակալի առաջընթացի անհրաժեշտության մասին, որպեսզի աշակերտը կարողանա աստիճանը հաջողությամբ ավարտել: Ցանկալի է, որ դասուկը ուսումնական տարվա վերջում յուրաքանչյուր աշակերտի համար գրի համառոտ բնութագիր, որտեղ կնկարագրի.

ա: աշակերտի ուժեղ կողմերը, աշակերտի հաջողություններն ակադեմիական և սոցիալական տեսանկյունից, նրա հնարավոր մասնակցությունը խմբակներում, մարզական մրցումներում թե այլ միջոցառումներում,

բ: աշակերտի ակադեմիական, ֆիզիկական, հուզական և սոցիալական զարգացման համար նշանակալի հարցեր, որոնց նախատեսումն օգտակար կլինեի աշակերտի համար:

Դաստիարակը համարվում է աշակերտի խորհրդատու, որն օգնում է նրան դպրոցում առավել ակտիվ գործունեություն ծավալել, նպաստում ակունքներում և խմբակներում նրա սեփական հակումների զարգացմանը, օգնում ապագա մասնագիտության ընտրության, ընդհարումների խաղաղ կարգավորման գործում և այլն: Հիմնականում դաստիարակը կարգավորում է իր դաստիարակական դասարանի աշակերտների փաստաթղթերը: Թերևս, փոքր դպրոցում, հնարավոր է, այս գործառույթը համատեղի մաս փոխանօրերը (մաս ուսմասվարը):

Դաստիարակը պատասխանատու է իր դաստիարակական դասարանի աշակերտների ամենօրյա հաճախման հաշվառման և ստուգման համար՝ այս պլանով սահմանած պահանջներին համապատասխան:

## Մանկավարժի կողմից ուսումնական գործընթացի պլանավորումը

Բոլոր դպրոցներում (որտեղ առարկաների մեկից ավելի ուսուցիչներ կան) ցանկալի է լինեն առարկայական խմբերի ուսուցիչների ամբիոններ, որոնք կմիավորեն առարկայական խմբերի բոլոր մանկավարժներին: Ամբիոնը առարկայական խմբի բոլոր մանկավարժների միասնականության պայմանական անվանումն է: Ամբիոնների աշխատանքի գործառույթները կարող են լինել.

- ❖ Առարկայական խմբի առարկայի (առարկաների) ուսուցման համակարգում:
- ❖ Միմյանց միջև փորձի փոխանակում, հաջողությունների նախապայմանների կանխորոշում և հիմնախնդիրների կարգավորման ուղիների որոնում:
- ❖ Դասագրքերի ընտրություն:
- ❖ Գնահատման բաղադրամասերի մշակում և նկարագրում:
- ❖ Մյուս առարկայական խմբերի մանկավարժների հետ համաձայնեցված աշխատանքի անցկացում: (Օրինակ, պատմության և վրաց լեզվի ընդհանուր թեմատիկայի համաձայնեցում, էքսկուրսիաների ժամանակ ընդհանուր առաջադրանքների հորինում և այլն::)
- ❖ Արհեստավարժական զարգացման ուղիների նախանշում:
- ❖ Երաշխավորությունների մշակում՝ օժանդակ ուսումնական նյութերի և գրադարանի համար անհրաժեշտ գրքերի մասին:
- ❖ Երաշխավորությունների մշակում՝ նոր մեթոդաբանությունների և մոտեցումների մասին:

Որոշ դպրոցներում տարրական աստիճանի աշակերտներն առանձին են միավորվում: Սա նրանց օգնում է տարրական դասարաններում գոյություն ունեցած հիմնախնդիրները կարգավորել միասնաբար և առարկաների միջև համաձայնեցման հիման վրա:

Ամբիոնի արդյունավետ աշխատանքի համար ցանկալի է ընտրել նախագահ, մեկամյա ժամկետով: Ցանկալի է, նույն մանկավարժը կրկին նախագահ ընտրվի միայն այն բանից հետո, ինչ առարկայական խմբի բոլոր անդամներն առավել մեկ անգամ եղել են նախագահ: Նախագահի գործառույթներն են.

- ❖ Մշտական հանդիպումների կազմակերպում (օրակարգի պատրաստում, անհրաժեշտության դեպքում արձանագրությունների և փաստաթղթերի վարում):
- ❖ Առարկայական խմբի խորհուրդների որոշումների մատուցում դպրոցը կառավարող մարմիններին (օր.՝ դասագրքերն ընտրելու մասին):
- ❖ Մասնագիտական զարգացման համար օգտավետ միջոցառումների կազմակերպում (վարժանքներ, գիտաժողովներ և այլն):

Հնարավոր է ամբիոնի նախագահ լինելը դպրոցում խրախուսման տարր լինի այն ուսուցիչների համար, որոնք ավելի շատ են հոգ տանում դպրոցի և սեփական հնարավորությունների զարգացման մասին:

Հնարավոր է, ամբիոնները յուրաքանչյուր առարկայական խմբում սահմանեն լավագույն աշակերտի (աստիճանի կամ դասարանի համաձայն) մրցանակ, որն ամեն տարի, դպրոցն ավարտելիս, հանձնվում է ընդհանուր ժողովի ժամանակ:

Ամբիոնի աշխատանքը լինում է արդյունավետ, եթե նրա անդամները հավաքվում են պարբերաբար (յուրաքանչյուր եռամսյակում գոնե մեկ անգամ): Ցանկալի է ամբիոնի հավաքույթն անցկացնել տարվա սկզբին: Այս հավաքների ժամանակ ցանկալի է տեղի ունենա Ազգային ուսումնական պլանի առարկայական պլանների և, համապատասխանաբար, ընտրված ձեռնարկների քննարկում: Նախօրոք պետք է քննարկվեն հետևյալ հարցերը. ի՞նչ կարիքներ կունենան մանկավարժները տարվա ընթացքում, ի՞նչ հիմնախնդիրներ հարկ կլինի կարգավորել, ի՞նչ միջոցներ անհրաժեշտ կլինի գործադրել արդյունավետ ուսուցման համար և այլն: Եռամսյակների վերջում ամբիոնի հանդիպման ժամանակ պետք է վերանայվի նաև կրթական չափորոշիչների կատարման ընթացքը: Պետք է բացահայտվեն և գնահատվեն եղած հիմնախնդիրները, թե ինչ որակով կկարողանան բոլոր աշակերտները հասնել առարկայական պլաններում նկարագրած արդյունքներին:

## Դպրոցական ուսումնական պլան

Վրաստանի «Ընդհանուր կրթության մասին» օրենքը պարզաբանում է, որ դպրոցական ուսումնական պլանը՝ «ուսումնական պլան է, որը կոնկրետ կրթական հիմնարկությունների համար ճշգրտում է Ազգային ուսումնական պլանում տրված ծանրաբեռնվածությունը՝ անհրաժեշտ և առավելագույն ծանրաբեռնվածության շրջանակներում, որոշում է Ազգային ուսումնական պլանով նախատեսված լրացուցիչ կրթական և չնախատեսված լրացուցիչ կրթական ու դաստիարակչական սպասարկումները, ինչպես նաև դպրոցում ընթացող կրթական միջոցառումները»:

Այս նույն օրենքով, յուրաքանչյուր դպրոց, Ազգային ուսումնական պլանի հաշվառմամբ, պարտավոր է մշակել սեփական դպրոցական պլան: Դպրոցական ուսումնական պլանը մշակելու է (հնարավոր է, ամբիոնների աշխատանքի հիման վրա) մանկավարժական խորհուրդը՝ տնօրենի մասնակցությամբ: Մանկավարժական խորհուրդը դպրոցական ուսումնական պլանը հաստատում է հոգաբարձուների խորհրդի հետ համաձայնությամբ: Դպրոցական ուսումնական պլանը պետք է ամեն տարի նորացվի:

## Դպրոցական ուսումնական պլանի անհրաժեշտ մասերն են.


- ❖ Դպրոցական ժամային ցանցը:
- ❖ Ազգային ուսումնական պլանով չնախատեսված կրթական և դաստիարակչական սպասարկումը:
- ❖ Դասագրքերի ցանկը:
- ❖ Ինկլյուզիվ կրթությունը:
- ❖ Գնահատման սկզբունքները (առարկաների և դասարանների համաձայն, գնահատման բաղադրամասերը, անհրաժեշտ նվազագույնը, որը պետք է հաղթահարի աշակերտը՝ դասարանից դասարան տեղափոխվելու համար, ներքին դպրոցական թեստավորումները և այլն):
- ❖ Դասղեկական ծրագիրը:

## Դպրոցական ժամային ցանց

Դպրոցական ժամային ցանցը պարունակում է յուրաքանչյուր դասարանի համաձայն ճշգրտված դասերի կարգացուցակ, որը ճշգրտում է, թե շաբաթվա որ օրը և որ ժամանակահատվածում որ առարկան է դասավանդվում: Հենց այստեղ պետք է նշվի՝ ովքեր են ուսուցանելու այս առարկաները: Այս նույն ցանցում պետք է նշված լինեն բոլոր լրացուցիչ և դաստիարակչական ծառայությունները, ինչպես նաև ժամանակի և մանկավարժի (խմբակի ղեկավարի: թե մյուսների մատնանշումով:

Բոլոր դպրոցները կարող են, սեփական ցանկության և հնարավորությունների սահմաններում, առաջարկել լրացուցիչ կրթական և դաստիարակչական սպասարկում: Դա կարող է լինել լրացուցիչ առարկա կամ խմբակ: Լրացուցիչ առարկան կարող է դասավանդվել ֆակուլտատիվ կամ պարտադիր ձևով:

Ֆակուլտատիվ առարկային աշակերտները մասնակցում են ըստ ցանկության: Պարտադիր լրացուցիչ առարկային ներկա գտնվելը պարտադիր է բոլոր աշակերտների համար: (Օր.՝ Տնտեսագիտություն առարկան յոթերորդ դասարանում կարող է դասավանդվել որպես ֆակուլտատիվ առարկա: Նման պարագայում այդ առարկային հաճախում են միայն այն աշակերտները, ովքեր արտահայտում են ցանկություն: Նույն առարկան դպրոցը կարող է ներմուծել որպես պարտադիր: Այս դեպքում բոլոր յոթերորդ դասարանցիները պարտավոր են հաճախել այս առարկային):



## Պարտադիր լրացուցիչ առարկաներ Ֆակուլտատիվ առարկաներ

Որպեսզի դպրոցն աշակերտներին առաջարկի Ազգային ուսումնական պլանով չնախատեսած կամ նախատեսած լրացուցիչ կրթական և դաստիարակչական ծառայություն, պարտադիր է, որ դպրոցն ուսումնական տարվա սկզբին գրավոր պարզաբանի.

- ա) Այդ բնույթի ծառայությունների ցուցակը:
- բ) Պետք է ճշգրտվի, թե ինչ տեսքով են դասավանդվելու այս առարկաները: Այստեղ պետք է պարզաբանվի նաև այն, թե այս առարկան որքանով է պարտադիր կամ ֆակուլտատիվ՝ աշակերտների համար:
- գ) Լրացուցիչ առարկաների համար դպրոցը պետք է մշակի յուրաքանչյուր առարկայի ուսումնական պլան (եթե նման պլան արդեն տրված չէ ազգային ուսումնական պլանի առարկայական ծրագրերում), որը պետք է պարունակի յուրաքանչյուր առարկայի ուսումնասիրման նպատակները (որտեղ ձևակերպված կլինեն, թե ինչ տեղեկություններ, ինչպիսի կարողությունների և հարաբերությունների զարգացում և ուսուցանում է նախատեսում այս դասընթացը:), գնահատման սկզբունքները (այս առարկայի ուսուցումը գնահատվելու է գնահատականներով կամ ստուգարքի տեսքով) և անհրաժեշտ ուսումնական նյութերի ցուցակը (դասագրքեր, որևէ այլ գրքեր կամ տետրեր::

### Ուսումնական նյութ

Անհրաժեշտ է, որ բոլոր հանրային դպրոցների մանկխորհուրդները հաստատեն ՀԻԻԳ Ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնի կողմից կնիք-մակագրություն ստացած և ամբիոնների կողմից ընտրված դասագրքերի ցանկը, որը դպրոցը կօգտագործի ուսումնական գործընթացում, այն դասագրքերի կամ այլ որևէ գրքերի ցուցակը, որոնք մանկավարժները մշտապես օգտագործում են ուսումնական գործընթացում: Դասագրքերի ընտրությունը ցանկալի է տեղի ունենա առարկայական ամբիոնի հանդիպման ժամանակ: Յուրաքանչյուր դասարանում պետք է ընտրվի առավելագույնս մեկ դասագիրք (ներառյալ ենթաբաժինները կամ օր.՝ երրորդ դասարանի մաթեմատիկայի դասագիրքը նույնն է ողջ դպրոցի համար), առնվազն 5 տարով: Հնգամյա ժամկետի երկարատևության կապակցությամբ, բացառություն թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նոր ուսումնական պլանի ներդրման հետ մեկտեղ, փոխվում են նաև դասագրքերը կամ դասագիրքը, Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով, զրկվում է կնիք-մակագրությունից: Այս դեպքում դպրոցը պարտավոր է, սահմանված կարգի համապատասխան, նորից ընտրի համապատասխան դասարանի դասագիրքը:

Յուրաքանչյուր առարկայի համար դասագրքերի ընտրությունը և օգտագործումը լուրջ խորհրդածության կարիք ունի և անհրաժեշտ է հետևյալ կանոնների լրիվ պահպանում.

- Յուրաքանչյուր դասարանի բոլոր ենթաբաժինները պետք է ուսանեն միևնույն դասագրքով:

- Յուրաքանչյուր դասագիրք գործածության մեջ պետք է լինի առնվազն 5 տարի, բացի սույն պլանով նախատեսած բացառություններից:
- Դասագրքերը պետք է ընտրվեն ամբիոնների կողմից: Ընտրված դասագրքերի ցուցակը հաստատում է մանկխորհուրդը:
- Դասագրքերի ընտրությունը պետք է տեղի ունենա մինչև ուսումնական տարվա սկիզբը, առնվազն մեկ շաբաթ շուտ:
- Ուսուցիչն իրավունք ունի ուսուցման ժամանակ գործածել ՀԻԻԴ Ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնի կողմից կնիք-մակագրություն ստացած դասագրքերի ցուցակի մեջ չմտած գրքեր կամ այլ ուսումնական նյութեր, եթե նա գտնում է, որ այս գրքերը իրեն պիտանի կլինեն՝ Ազգային ուսումնական պլանում արտացոլված նպատակներին հասնելու համար, սակայն այս դասագրքերի օգտագործման իրավունք ունի միայն օժանդակ, լրացուցիչ նյութի ձևով: Ուսուցիչը, դպրոցը չեն կարող պարտավորեցնել աշակերտին գնել առանց կնիք-մակագրության դասագրքեր կամ այլ ուսումնական նյութ:
- Ընտրված դասագրքերի ցուցակը պետք է փակցված լինի ծնողների համար աչքի զարնող տեղում ոչ ուշ, քան ուսումնական տարին սկսվելուց 10 օր առաջ:
- Ընտրված դասագրքերի ցուցակը (բացի օժանդակ և լրացուցիչ նյութից) պետք է մատուցվի Վրաստանի կրթության և գիտության նախարարությանը և ՀԻԻԴ Ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնին՝ հատուկ այդ նպատակով ՀԻԻԴ Ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնի կողմից մշակված ձևի համաձայն: Դպրոցը պարտավոր է նաև Վրաստանի կրթության և գիտության նախարարությանը և ՀԻԻԴ Ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնին մատուցել հիմնավորում այն դասագրքերի ընտրության կապակցությամբ, որոնք չեն բավարարում Ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնի կողմից սահմանված և հրատարակված դասագրքերի գնահատման չափանիշների գոնե 20%-ը:
- Դասագրքի ընտրության ժամանակ մանկխորհուրդը պետք է նախատեսի Ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնի կողմից սահմանված և հրատարակված դասագրքերի գնահատումը, որը դպրոցների համար մատչելի է Ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնի կողմից կնիք-մակագրություն ստացած դասագրքերի գրացուցակի միջոցով: Կնիք-մակագրություն ստացած դասագրքերի գրացուցակը Ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնը հրապարակում է իր կողմից մատնանշված կայք-էջում և դպրոցներին մատուցում է էլեկտրոնային տարբերակով: Դասագրքի ընտրության ժամանակ ուսուցիչները կարող են առաջնորդվել նաև Ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնի կողմից մատնանշված կայք-էջում հրապարակված դասագրքի նմուշներով և հրատաչակչությունների կողմից ռեսուրս-կենտրոններում ունեցած դասագրքի նմուշով:

Դասագրքերն ավելի մատչելի դարձնելու նպատակով ցանկալի է, որ դպրոցը մշակի օգտագործած դասագրքերի տոնավաճառների կամ վարձով տալու համակարգ:



Նշանակալի է նաև, որ դպրոցը միջոցներ գտնի գրադարանների համար լրացուցիչ օրինակներ գնելու նպատակով՝ ինչը կօգնի սոցիալապես անապահով երեխաներին այն դեպքում, եթե դժվարանում են գրքեր գնել:

Դասագրքերից օգտվելիս ուսուցիչները պետք է հիշեն, որ դասագիրքը միջոցներից մեկն է և ոչ թե միակը, որը ծառայում է Ազգային ուսումնական պլանի առարկայական ծրագրերում տրված արդյունքներին հասնելուն: Պետք է հիշենք նաև, որ դասագիրքն ինքնընտանցյալ ծրագիր չէ, համապատասխանաբար, ուսուցիչը չպետք է կողմնորոշված լինի դասագրքում տրված «նյութն անցնելուն», այլ շեշտադրությունն անի դասագրքերում տրված տեքստերի, վարժությունների և պատկերազարդումների օգտագործման վրա՝ առարկայական չափորոշիչների արդյունքներին հասնելու համար: Դիշտն այն է, որ ուսուցիչը դասագիրքը հարմարեցնում է աշակերտների անհրաժեշտություններին և ոչ թե՝ ընդհակառակը, երբ ուսուցիչն աշխատում է ինքը հարմարվել դասագրքին: Ուսուցիչը կարող է ուսուցման գործընթացին մոտենալ ստեղծագործաբար, չօգտագործել որևէ տեքստ կամ ակտիվություն, փոխել ժամանակի տևողությունը, որ տրամադրվում է որևէ կոնկրետ թեմայի, տեղափոխել պարագրաֆների հաջորդականությունը, ավելացնել իր նախանշած ակտիվությունները և այլն:

## Գնահատման սկզբունքները

Դպրոցը պետք է սահմանի ընդհանուր գնահատման սկզբունքներ, որոնցով և պետք է առաջնորդվեն նրա բոլոր ուսուցիչները: Մյուս հարցերի հետ մեկտեղ, դպրոցը պետք է սահմանի.

ա) Ի՞նչն է այն նվազագույն արգելքը, որը պահանջվում է աշակերտից՝ դասարանից-դասարան փոխադրվելու համար:

բ) Ի՞նչն է այն նվազագույն արգելքը, որի հաղթահարում պահանջվում է աշակերտից՝ առարկայի յուրացումը բավարար համարելու համար: Հենց այստեղ պետք է պարզաբանվի, թե ինչ այլընտրանքներ է առաջարկում դպրոցը նրանց, ովքեր մինչև տարվա վերջն ի վիճակի չեն հաղթահարել այս արգելքը: Եթե գոյություն ունի «աշնանային», ի՞նչ է ենթադրվում դրա շրջանակներում: (Օրինակ, տալի՞ս է մանկավարժը կոնկրետ առաջադրանք աշակերտին, գիտի՞, արդյոք, վերջինս, թե ինչի՞ համաձայն է գնահատվելու, ունի՞, թե՛ ոչ, քննություն, նրանից պահանջվելու՞ է, արդյոք, որոշակի աշխատանքի ներկայացում և այլն): Նվազագույն արգելքը որոշելիս դպրոցը պետք է նախատեսի, որ աստիճանը հաջողությամբ ավարտելու համար, աշակերտը պետք է ունենա աստիճանի միջին գնահատական, առնվազն 5,1, իսկ սա նշանակում է որ նրա գնահատականները դասարանների համաձայն ևս բավական պետք է լինեն նրա համար, որ նա հասնի այս արդյունքին:

գ) Ինչպե՞ս է տեղի ունենում այն աշակերտների գնահատումը, ովքեր հաճախակի են բացակայում դպրոցից՝ հարգելի պատճառներով: Օրինակ՝ ինչպե՞ս պետք է վերականգնի բաց թողած նյութը, նրան անհրաժեշտ կլինե՞ն արդյոք լրացուցիչ դասեր և այլն:

դ) Ի՞նչ բաղադրիչներով են գնահատվում աշակերտները կոնկրետ առարկայից և յուրաքանչյուր բաղադրամասի նկարագրումը:



## Դպրոցական գնահատման համակարգի մշակման ժամանակ նախատեսվելիք անհրաժեշտ մոտեցումները

Ակադեմիական առաջադիմության գնահատումը պետք է լինի հաճախակի և բազմակողմանի: Պետք է գնահատվեն ոչ միայն տեղեկությունների տիրապետումը, այլ նաև ձեռք բերած հմտություն-կարողությունները, դատողության դրսևորման ձևերը և այլն: Ուսումնական գործընթացի բարեհաջող ընթացքի համար բավարար չէ աշակերտին գնահատել միայն ստուգողականների և թեստերի արդյունքների հիման վրա: Մանկավարժը աշակերտին պետք է գնահատի ուշադիր գնման արդյունքում կուտակված տվյալների, աշխատությունների ժողովածուների, շնորհանդեսների, հենց աշակերտի ինքնագնահատման, խմբային աշխատանքի թե՛ այլ բնույթի ակտիվությունների համաձայն: Գնահատելիս մանկավարժը պետք է հաշվի առնի կրթական գործընթացին աշակերտի մասնակցության աստիճանը, դասի ընթացքում նրա ակտիվությունը, ստեղծագործական ունակությունը և այլն: Անհրաժեշտ է աշակերտը նախօրոք տեղյակ լինի, թե ինչ չափանիշներով է գնահատվում իր ուսումնական ակտիվությունը:

Գնահատականներ	Նվաճման մակարդակները
10	Բարձր
9	
8	
7	Միջին
6	
5	Միջինից ցածր
4	
3	Թույլ
2	
1	

Չի արդարացվում կարգապահական պատժի դրդապատճառով ցածր գնահատականով գնահատումը: Առարկայի գնահատականը արտահայտում է աշակերտի ակադեմիական առաջադիմությունը: Աշակերտը ոչ համապատասխան վարմունքի համար (որը անմիջականորեն կապված չէ ուսումնական գործընթացի հետ) չպետք է պատժվի առարկայի գնահատականով: Եթե աշակերտը դասերի ժամանակ վարվում է անպատշաճ, դա, ինքնաբերաբար, անդրադառնում է նրա ակադեմիական առաջադիմության վրա, ինչը համապատասխանաբար նշանակում է, որ աշակերտի ակադեմիական առաջադիմությունը համեմատաբար ցածր կլինի նրա կարողություններից:

## Գնահատականների նշանակման համակարգը

Գնահատման համակարգը տասը միավորանոց է: Տասը լավագույն գնահատականն է, իսկ մեկը՝ ամենացածրը: Տասը միավորանոց համակարգը ավելի մեծ հնարավորություն է ընձեռում մանկավարժին՝ ակադեմիական առաջադիմության հարցում աշակերտին նրա առաջընթացն ու հետադիմությունը ցույց տալու համար:

Տարրական աստիճանում (I-VI դասարաններ) գործում է գնահատականների նշանակման հատուկ գծապատկեր: I-IV դասարաններում տարեկան գնահատումը գնահատականներով չի տեղի ունենում: Այս դասարաններում եռամսյակի վերջում և տարվա վերջում դաստիարակչությունը յուրաքանչյուր աշակերտի համար պետք է տեքստի ձևով գրի համառոտ ամփոփիչ մեկնաբանություն, որտեղ կրճարագրի աշակերտի հաջողությունները և կտա խորհուրդներ՝ կարողություններն ավելի լավ դրսևորելու համար:

V- VI դասարաններում արդեն տեղի է ունենում գնահատականների նշանակում 10 միավորանոց համակարգով:

V-VI դասարաններում և բազային ու միջնակարգ աստիճաններում ֆիզիկական դաստիարակչությունից աշակերտը գնահատվում է հետևյալ համակարգով՝ ստուգաբաժնի չստացավ, ստուգաբաժնի ստացավ, գերազանց ստուգաբաժնի ստացավ:

### Պաշտոնական կարգավիճակ ունեն հետևյալ գնահատականները.

- Առարկայի ընթացիկ գնահատական՝ աշակերտի ակադեմիական գիտելիքի և կարողության գնահատում:
- Առարկայի եռամսյակային գնահատական՝ առարկայից ստացած գնահատականը յուրաքանչյուր եռամսյակում:
- Առարկայի տարեկան գնահատական՝ առարկայի գնահատումը՝ ելնելով եռամսյակային գնահատականներից:
- Ընդհանուր տարեկան գնահատական՝ գնահատական, որը դրսևորում է բոլոր առարկաների գնահատման ամբողջականությունը:
- Աստիճանի ընդհանուր գնահատական՝ տարրական, բազային և միջնակարգ աստիճանների ընդհանուր գնահատականը:

Եթե ծնողին հետաքրքրում է իր զավակի առաջադիմությունը, նա, նախ՝ պետք է կապվի դաստիարակչի հետ և խնդրի նրան լրատվություն հավաքել իր զավակի ակադեմիական առաջադիմության և դասերին հաճախելու մասին: Դաստիարակչը պարտավոր է տարբեր մանկավարժների հարցուփորձ անել այդ աշակերտի մասին, որից հետո հանդիպել ծնողին և իրազեկել նրա զավակի ուսման և վարքի մասին տեղեկությանը:

## Գնատատման երկու հիմնական տեսակները

Գնահատման տեսակները և դրանց կիրառումը ժամանակի համաձայն		
	Որոշող	Չարգացնող
Ընթացիկ	Ամենօրյա առաջադրանքների կատարում, ընդգրկվածություն դասերին, նախագծի որևէ փուլ, որտեղ գրվում է գնահատական:	Ամենօրյա առաջադրանքների կատարում, ընդգրկվածություն դասերին, նախագծի որևէ փուլ, որտեղ բացատրում ենք աշակերտին, թե ինչպես բարելավի արդյունքները:
Հանրագումարիչ	Որևէ թեմայի, ժամանակահատվածի, նախագծի վերջում ստացած գնահատական:	Որևէ թեմայի, ժամանակահատվածի, նախագծի վերջում ստացած բանավոր գնահատում, մեկնաբանություն, խորագրերով գնահատում և այլն:

Դպրոցում հիմնականում ընդունելի է երկու տեսակի գնահատում. որոշող և զարգացնող: Երբ մանկավարժը գնահատական է նշանակում աշակերտին և սահմանափակվում միայն դրանով, այդ գնահատականը որոշում է աշակերտի նվաճումների մակարդակը՝ նախանշված նպատակների հարաբերությամբ: Իսկ երբ մանկավարժը կիրարկում է գնահատման այն ձևը, որը աշակերտին օգնում է ոչ միայն սեփական նվաճումների մակարդակի որոշման, այլ նաև զարգացման հարցում, սա արդեն զարգացնող գնահատում է: Չարգացնող գնահատման տիպիկ ձևը մեկնաբանությունն է, որը գրվում է եռամսյակի ընթացքում կամ վերջում և կամ՝ որևէ առաջադրանք կատարելուց հետո: Այն նկարագրում է աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը և միևնույն ժամանակ ընդգրկում հանձնարարականներ՝ նվաճումների բարելավման մասին: Չարգացնող գնահատման տարածված միջոցներից մեկն է գնահատման աղյուսակների (խորագրերի) կիրառումը:

Կարևոր է որոշող և զարգացնող գնահատումների մշտական կիրառումը ուսման գործընթացում: Երաշխավորված է, որպեսզի զարգացնող գնահատման մասը ուսումնական գործընթացում լինի ավելի շատ, քան որոշող գնահատմանը:

### Եռամսյակային գնահատականի բաղադրամասերը

Աշակերտի գնահատականը պետք է բխի նրա կողմից առարկայի ուսումնասիրման տարբեր բաղադրամասերից: Աշակերտները, հնարավոր է, գնահատվեն հետևյալ բաղադրամասերի համաձայն.

- ա) ընդգրկվածություն դասին,
- բ) տնային առաջադրանքներ,
- գ) ընթացիկ դասարանային առաջադրանքներ,
- դ) ամփոփիչ առաջադրանքներ (ստուգողական, քննություն, թետավորում և այլն),
- ե) նախազծեր,
- զ) լրացուցիչ բաղադրամաս, որն ընդհանուր գնահատման 10%-ից ոչ ավելի է և, որը կազմվում է աշակերտների կողմից: (Օր.՝ կազմակերպվածություն, ստեղծագործականություն, խմբում արդյունավետ աշխատանք և այլն):

Յուրաքանչյուր առարկայի ուսումնասիրման ժամանակ, դպրոցը, ամբիոնների օգնությամբ, առաջին հինգից կազմում է ամնվազն երեք բաղադրիչ, որոնց շնորհում է տոկոսային կշիռներ՝ 90%-ի շրջանակներում: Մնացած 10 տոկոսի բաժանումը տեղի է ունենում մանկավարժի կողմից՝ արդեն աշակերտների հետ համաձայնությամբ: Սկզբից մանկավարժներն աշակերտներին ծանոթացնում են ամբիոնի կողմից մշակված բաղադրամասերը և բացատրում, թե ինչ են սպասում, յուրաքանչյուր բաղադրիչ գնահատելիս: Դրանից հետո, աշակերտների հետ միասին, որոնում են այն չափանիշները, որոնք, ըստ նրանց, նախընտրելի կլինեն, որ օգտագործվեն լրացուցիչ տասը տոկոսի շրջանակներում: Ուսուցիչը կարող է օգնել աշակերտներին, այս բաղադրամասի իմաստավորման մեջ, սակայն նշանակալի է, որպեսզի աշակերտներն անձամբ որոշեն այս բաղադրիչի էությունը և գնահատման մակարդակները:

Յուրաքանչյուր բաղադրամասի համաձայն, կազմվում են գնահատման

Ներած. - 20

մակարդակներ՝ մեկից մինչև տասը, որոնք պարզաբանում են, թե ինչպիսի միավորներ են գրվում՝ ըստ տարբեր մակարդակների: Երաշխավորվում է եռամսյակային գնահատումը կազմել զարգացնող ձևով: Երաշխավորվում է նաև մեկնաբանություններ գրել եռամսյակի վերջում՝ բոլորի համար և եռամսյակի մեջտեղում՝ նրանց համար, ովքեր անպայման պետք է բարելավեն իրենց ուսումը՝ եռամսյակային դրական գնահատական ունենալու համար: Եռամսյակի մեջտեղում ևս կարելի է գրել մեկնաբանություն, եթե աշակերտը, նախորդ եռամսյակի համեմատությամբ, զգալիորեն բարելավել է իր առաջադիմությունը: Դրա նշումը զգալիորեն կխթանի աշակերտին՝ ուսման որակը մինչև եռամսյակի վերջը պահպանելու համար:

Պարտադիր չէ, որ ուսուցիչն ամեն աշակերտի, ամեն դասի ժամանակ գնահատի բոլոր բաղադրամասերով: Բաղադրամասերի համաձայն գնահատականների տոկոսային հաշվումը տեղի է ունենում եռամսյակի վերջում կամ այն ժամանակ, երբ ուսուցչին որևէ ժամանակահատվածում հետքաքրքրում է աշակերտի ընդհանուր գնահատականը հաշվարկել:

### Եռամսյակային գնահատականի հաշվարկումը տեղի է ունենում հետևյալ կարգով.

1. Յուրաքանչյուր բաղադրամասից հաշվարկվում է միջին միավոր, կամ աշակերտի կողմից որևէ առարկայի բաղադրամասերից մեկից ստացած միավորների գումարը պետք է բաժանվի միավորների քանակի վրա (օրինակ՝ եթե աշակերտը բաղադրամասերից մեկից եռամսյակի ընթացքում ունի 9, 8, 6, 8 և 8, նրա միջին միավորը կլինի  $(9+8+6+8+8): 5=7,8$ )

2. Բաղադրամասի միջին միավորը պետք է բազմապատկվի տեսակարար բաժնի վրա (օրինակ, եթե բաղադրամասի տեսակարար բաժինն է 20%, այդ դեպքում միավորների միջին թվաբանականը կբազմապատկվի 0,2-ով կամ  $7,8 \times 0,2 = 1,56$ ):

3. Բաղադրամասերի տեսակարար բաժնի նախատեսումով հաշվարկած միավորները պետք է գումարվեն (օրինակ՝ եթե աշակերտն առաջին բաղադրամասից ունի 1,56, երկրորդից՝ 2,32, երրորդից՝ 1,77, իսկ չորրորդից՝ 2,43, առարկայի տարեկան գնահատականը կլինի  $1,56 + 2,32 + 1,77 + 2,43 = 8,08$ ): Ստացված միավորը պետք է կլորացվի՝ Ազգային ուսումնական պլանով նախատեսած կարգի համաձայն:

### Առարկայի տարեկան գնահատականը

Աշակերտը յուրաքանչյուր եռամսյակի վերջում ստանում է եռամսյակային գնահատում: Տարվա վերջում մանկավարժն այս երեք եռամսյակային գնահատումների հիման վրա առարկայից նշանակում է վերջնական գնահատականը: Պարտադիր չէ, որ առարկայի տարեկան գնահատականը լինի եռամսյակային գնահատականների ճշգրիտ միջին թվաբանականը: Միջին թվաբանականի արդյունքը կլորացնելիս, թույլատրելի է նվազագույն շեղում՝ աշակերտի առաջադիմության թե հետադիմության հաշվառումով:

Անթույլատրելի է կոնկրետ առարկայից աշակերտների գնահատում միայն քննության (հաճախ դպրոցում դա ավարտական թեստավորման տեսքով է տեղի ունենում) արդյունքների համաձայն: Ընդհանուր տարեկան գնահատականը հնարավոր է նկատի ունենա նաև այսպիսի թեստավորման գնահատականը, եռամսյակային

գնահատականների հետ միասին: Հնարավոր է, որ աշակերտը որևէ եռամսյակի գնահատականը ստացած լինի էքստեռնատի քննության միջոցով: Այս դեպքում այս գնահատականը ևս ունի իր ազդեցությունը առարկայի ընդհանուր գնահատականի հաշվարկման վրա:

Միջնակարգ աստիճանի աշակերտի կողմից անհարգելի պատճառով կոնկրետ առարկայի համար 1 ուսումնական տարվա ընթացքում նախատեսված ժամերի 1/5-ի բացակայության, կամ անհարգելի պատճառով 1 ուսումնական տարվա ընթացքում ժամերի 1/2-ի բացակայության դեպքում աշակերտն այս առարկայից չի ստանում առարկայի տարեկան գնահատական և տվյալ առարկայից գնահատական է ստանում էքստեռնատի քննության հիման վրա: Բազային աստիճանի աշակերտի նկատմամբ այս օրենքը տարածելու հարցը, և այն տարածելու դեպքում աշակերտի գնահատման կարգը, որոշվում է դպրոցի կողմից ուսումնական տարվա սկզբում:

### Ընդհանուր տարեկան գնահատական

Ընդհանուր տարեկան գնահատականը հաշվարկվում է աստիճանի շրջանակներում աշակերտին դասարանից դասարան տեղափոխելու նպատակով:

Ընդհանուր տարեկան գնահատականն այն գնահատականն է, որն արտահայտում է աշակերտի ակադեմիական առաջադիմությունը՝ բոլոր առարկաներից: Ընդհանուր տարեկան գնահատականը պետք է արտահայտվի մեկ գնահատականով: Այս գնահատականի հաշվարկումը տեղի է ունենում հետևյալ բանաձևով. վերցնում ենք բոլոր առարկաների երեք եռամսյակների գնահատականները, ի մի ենք բերում և բաժանում գնահատականների ընդհանուր քանակի վրա:

Ընդհանուր տարեկան գնահատականը կլորացվում է հետևյալ սկզբունքով. (օրինակ՝ 7,14-ը կլորացվում է 7,1-ի, 8,15-ը կլորացվում է 8,2-ի, իսկ 9,27-ը կլորացվում է 9,3-ի):

Դպրոցը պետք է վճռի, թե ինչ է անում այն դեպքում, եթե աշակերտը եռամսյակի ընթացքում որևէ առարկայից գնահատված չէ: Հնարավոր է այս եռամսյակում աշակերտը գնահատվի զրո՝ առարկայի կամ ընդհանուր տարեկան գնահատականի հաշվարկման ժամանակ: Հնարավոր է դպրոցը պարտավորեցնի աշակերտին հանձնարարությունների մի մասը փոխհատուցել, ամառվա ընթացքում վերականգնել և այլն: Բացի այդ, միջնակարգ աստիճանի աշակերտի կողմից անհարգելի պատճառով կոնկրետ առարկայի համար 1 ուսումնական տարվա ընթացքում նախատեսված ժամերի 1/5-ի բացակայության, կամ անհարգելի պատճառով 1 ուսումնական տարվա ընթացքում ժամերի 1/2-ի բացակայության դեպքում, դպրոցը տարեվերջին չի հաշվարկում այս աշակերտի ընդհանուր տարեկան գնահատական: Այս դեպքում դպրոցն աշակերտի ընդհանուր տարեկան գնահատականը հաշվարկում է աշակերտի կողմից համապատասխան առարկայի հանրակրթական ծրագրի էքստեռնատի քննության գնահատումը նախատեսելով: Բազային աստիճանի աշակերտի նկատմամբ այս օրենքը տարածելու հարցը, և այն տարածելու դեպքում աշակերտի գնահատման կարգը որոշվում է դպրոցի կողմից ուսումնական տարվա սկզբում:

## Աստիճանի ընդհանուր գնահատականը

Աստիճանի ընդհանուր գնահատականը հաշվվում է նույն սկզբունքով. ինչպես ընդհանուր տարեկան գնահատականը կամ ի մի ենք բերում աստիճանի ընթացքում սովորած յուրաքանչյուր առարկայի տարեկան գնահատականները (մաթեմատիկա՝ 10-րդ դասարան, վրացերեն 10-րդ դասարան, մաթեմատիկա 11-րդ դասարան, վրացերեն 11-րդ դասարան և այլն) և բաժանում տարիների քանակի վրա՝ հաշվում ենք միջին թվաբանականը: Աստիճանի ընդհանուր գնահատականը կլորացվում է տասնավորի սկզբունքով (օրինակ՝ 6,55-ը կլորացվում է 6,6-ի, 7,58-ը կլորացվում է 7,6-ի, իսկ 9.43-ը կլորացվում է 9,4-ի):

Վրաստանի տարածքում 2008 թվականի օգոստոսին Ռուսաստանի Դաշնության կողմից իրականացված ագրեսիայի հետևանքով տուժած այն աշակերտների համար, որոնց համար չի հաջողվում ընդհանուր կրթության աստիճանների մեջ մտնող առարկաների տարեկան գնահատականներն արտացոլող փաստաթղթեր գտնել, ընդհանուր կրթության աստիճանի ընդհանուր գնահատականը հաշվարկվում է այս աշակերտների անցած առարկաների տարեկան գնահատականներն արտացոլող, հանրակրթական դպրոցներում գոյություն ունեցած փաստաթղթերի հիման վրա:

Յուրաքանչյուր աստիճանի բարեհաջող ավարտումը պարտադիր է նրա համար, որպեսզի աշակերտն ունենա հաջորդ աստիճանում ուսումը շարունակելու և/կամ բազային աստիճանի ընդհանուր կրթության ավարտական վկայական կամ լրիվ ընդհանուր կրթության ավարտական վկայական ստանալու իրավունք: Հաջողակ է համարվում այն աշակերտը, որի աստիճանի եզրափակիչ գնահատականը (կլորացնելուց հետո) լինում է 5, 1-ից ոչ պակաս: Միջնակարգ աստիճանի վերջնական գնահատականը, որը կլինի ոչ պակաս, քան 5,1-ը, լրիվ ընդհանուր կրթության ավարտական վկայական տալու հիմունք չէ:

Վրաստանի տարածքում 2008 թվականի օգոստոսին Ռուսաստանի Դաշնության կողմից իրականացված ագրեսիայի հետևանքով տուժած այն աշակերտների համար, որոնց համար չի հաջողվում աստիճանի մեջ մտնող առարկաների ընդհանուր տարեկան գնահատականներն արտացոլող փաստաթղթեր գտնել, ընդհանուր կրթության յուրաքանչյուր աստիճան հաջող ավարտված կհամարվի, անկախ հանրակրթական հաստատության կողմից հաշվարկված աստիճանի ընդհանուր գնահատականից: Տվյալ ձևով հաշվարկված աստիճանի ընդհանուր գնահատականը այս աշակերտների համար հաջորդ աստիճանում ուսումը շարունակելու և/կամ բազային ընդհանուր կրթության կամ լրիվ ընդհանուր կրթության ավարտական վկայական հատկացնելու հիմունք է:

Հնարավոր է, որ աստիճանն անհաջող հաղթահարելու դեպքում աշակերտը կրկնի այն առարկաները, որոնք խանգարում են աստիճանի ընդհանուր դրական գնահատական ստանալու հարցում:

## Աշակերտների ակադեմիական նվաճումների ճանաչումը

Տարեկան կամ աստիճանի ընդհանուր գնահատականը՝ 8, 9 և 10, ենթադրում է տարվա կամ աստիճանի գերազանց ավարտում: Ամեն տարվա վերջում յուրաքանչյուր աստիճանի համար պետք է կազմակերպվի ընդհանուր ժողով, որտեղ գերազանցիկ աշակերտներին կներկայացնեն՝ գերազանցության կարգի համաձայն: Ըստ հնարավորությունների, դպրոցը կարող է սահմանել նաև այդպիսի աշակերտների պարզևատրում: Նման միջոցառումները, աշակերտների շրջանում և ընդհանուր առմամբ դպրոցում, զգալիորեն բարձրացնում են հարգանքը ակադեմիական առաջադիմության նկատմամբ և ընդհանրապես հարգանքի զգացումը դպրոցում:

Անձը, որի միջնակարգ աստիճանի ընդհանուր գնահատականն է 10 առանց կլորացման. ստանում է լրիվ ընդհանուր կրթության ոսկե մեդալակրի ավարտական վկայական, իսկ ում աստիճանի ընդհանուր գնահատականն է 10՝ կլորացման հետևանքով (կան 9.8-ից 10-ը ներառյալ) ստանում է լրիվ ընդհանուր կրթության արծաթյա մեդալակրի ավարտական վկայական:

Վրաստանի տարածքում 2008 թվականի օգոստոսին Ռուսաստանի Դաշնության կողմից իրականացված ազդեցիկ հետևանքով տուժած աշակերտին լրիվ ընդհանուր կրթության ոսկե մեդալակրի ավարտական վկայական տրվում է այն դեպքում, եթե այս աշակերտի գնահատականներն արտացոլող հանրակրթական հաստատությունում գոյություն ունեցած փաստաթղթերի հիման վրա նրա աստիճանի միջին գնահատականը 10 է առանց կլորացման. իսկ ում աստիճանի ընդհանուր գնահատականն է 10՝ կլորացման հետևանքով (կան 9.8-ից 10-ը ներառյալ) ստանում է լրիվ ընդհանուր կրթության արծաթյա մեդալակրի ավարտական վկայական:

Թույլ չի տրվում աշակերտների գնահատականները հրապարակով հայտարարել: Տարեվերջին դպրոցը պետք է հայտարարի միայն գերազանցիկների անունները, դպրոցական մասշտաբով պակաս հաջողությունների նշումը կարող է նշանակալիորեն նսեմացնել այսպիսի աշակերտներին և բացասաբար ազդել նրանց ապագա հաջողությունների վրա:

## Դաստեղակական ծրագիր

Յուրաքանչյուր աշակերտ դպրոցում պետք է ունենա դաստեղ: Դաստեղակական ծրագրում, որը դպրոցական ուսումնական ծրագրի մի մասն է, պետք է պարզաբանված լինի, թե ինչ սկզբունքով է տեղի ունենում աշակերտների բաժանումը խմբերի, այսպես կոչված, դաստեղակականների: Պետք է պարզաբանված լինի նաև սկզբունքը, թե ինչ ժամանակամիջոցով է կոնկրետ դաստեղը պատասխանատու աշակերտների համար և ինչ են ընդգրկում այդ պատասխանատվությունները բացի նրանից, ինչը Ազգային ուսումնական պլանի պահանջն է: (Օր. գոյություն ունի՞ արդյոք դպրոցում սահմանված հատուկ ժամանակ, երբ դաստեղը հանդիպում է իր դաստեղակական աշակերտի):

Դաստեղակական ծրագիրը պետք է պարզաբանի այն, թե ինչ միջոցառումներ է անցկացնում դաստեղը՝ հաջողությունների հասնելու համար, որ իր աշակերտներին պատշաճ օգնություն ցուցաբերի (օր.՝ ժամանակ հատկացնո՞ւմ է արդյոք աշակերտների հետ հանդիպմանը, կանոնավոր կերպով հանդիպո՞ւմ է ծնողների հետ՝ նրանց զավակների հիմնախնդիրների կամ նվաճումների մասին զրուցելու համար, հավաքո՞ւմ



է անարկաների մանկավարժներից տեղեկություններ՝ իր դաստեկական խմբի առաջադիմության և վարքի մասին և այլն::

## Ինկլյուզիվ կրթություն

Ինկլյուզիվ կրթությունը ենթադրում է բոլոր տեսակի հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտների առավելագույն չափով ընդգրկում ուսումնական գործընթացին: Դպրոցը պետք է հաստատի, թե ով է պատասխանատու այս հարցերի համակարգման համար (այդ անձնավորությունը կարող է լինել տնօրինության անդամ, սպասարկող անձնակազմից, ուսուցիչ կամ նույնիսկ ծնող և այլն): Այս անձնավորության հետ պետք է նշանակվի հանդիպումների ժամկետը, երբ հատուկ կարիքներ ունեցող աշակերտների ծնողները կկարողանան գրուցել հնարավոր հիմնախնդիրների և դրանց վճռման ուղիների մասին:

Եթե դպրոցն ունի հատուկ կարիքներ ունեցող աշակերտ, դպրոցն անպայման պետք է որոշի, թե ինչ է անում այս աշակերտի կրթության համար համապատասխան պայմաններ ստեղծելու ուղղությամբ (օր.՝ նա կարող է ունենալ հատուկ դասացուցակ կամ հատուկ տեղ, որտեղ կարող է հանգստանալ և այլն): Շատ դեպքերում կարևոր է, որ դպրոցն այսպիսի աշակերտի համար կազմի անհատական ուսումնական պլան: Եթե աշակերտի ուսման գործընթացում կան խափանումներ, նրա գնահատման չափանիշները պետք է կազմվեն՝ ելնելով նրա անհատական պլանից և կարողություններից: Մանկավարժը ամենևին էլ չպետք է խուսափի երկու բացարձակապես տարբեր հնարավորությունների տեղ աշակերտների նույն միավորով գնահատելուց, քանզի հնարավոր է այս միավորը բացահայտի այդ երկու աշակերտների հնարավորությունների իրացման մակարդակը: Մի աշակերտի միավորները միշտ չէ, որ համեմատելի են երկրորդ աշակերտի միավորների հետ:

## Մեթոդիկայի հիմնական կողմնորոշիչները ճիշտ բառապաշարի կիրառումը

Խիստ կարևոր է դպրոցական բառապաշարում ուսուցման գերակա կողմերի նախատեսումը: Դասի ժամանակ ճիշտ բառապաշարի կիրառումը նպաստում է աշակերտների շրջանում այս գերակայությունների յուրացմանը: Այդ պատճառով մանկավարժը հաճախակի պետք է կիրառի այնպիսի արտահայտություններ, որոնք պարունակում են դատողության մասին բառեր. «խորհրդածենք, բացահայտենք, վերաիմաստավորենք, տեսակավորենք, գնահատենք»:

Ուսուցման գործընթացում պետք է հնչեն այնպիսի հարցեր, որոնք նպաստում և խթանում են մտածողությանը: Դպրոցը պետք է ձևավորի խորհելու կուլտուրա և խորհելու միջավայր: Մանկավարժը դրան պետք է նպաստի առաջադրանքներով և դասի ժամանակ կիրառվող բառապաշարով: Աշակերտը չպետք է խուսափի սեփական կարծիքը արտահայտելուց, որքան էլ այն անհեթեթ թվա նրան կամ նրա շրջապատում գտնվողներին:

## Առարկաների ինտեգրված ուսուցում

Դպրոցում ստացած փորձը, գիտելիքներն ու հմտություն-կարողությունները մարդուն պետք է տան աշխարհը լրիվությամբ ընկալելու հնարավորություն: Համապատասխանաբար, դպրոցում ուսումնասիրվող առարկաները պետք է նախատեսեն միմյանց հետ սերտ կապ: Հմտություն-կարողություններն ու բազային գիտելիքները, որոնք մենք զարգացնում ենք դպրոցում, պետք է լինեն լայն մասնագիտական, որպեսզի օգնեն մարդուն՝ հաջողությունների հասնել ոչ թե որևէ մեկ, այլ ցանկացած բնագավառում, որտեղ նա գործում է:

## Բազմակողմանի հեռանկարի կարևորումը

Իրադարձությունների գնահատումը, լինեն դրանք՝ պատմական, ֆիզիկական թե գեղագիտական, պետք է տեղի ունենա տարբեր տեսանկյուններով: Ուսումնական նյութի տարբեր տեսանկյուններից գնահատումը նպաստում է աշակերտների մեջ քննադատական դատողության ձևավորմանը, ինչը պարտադիր է ստերեոտիպը հաղթահարելու համար: Իմաստային հարցն ունի բազմաթիվ ճիշտ պատասխաններ:

Դպրոցը պարտավոր է օգնել աշակերտներին՝ այս ճիշտ պատասխանների հայտնաբերման մեջ՝ հիմնախնդրի տարբեր տեսանկյուններից գնահատման ուսուցմամբ:

Դպրոցը անպայման պետք է նպաստի ուսումնական հաստատություններում բազմազանության առկայությանը, ոչ միայն աշակերտների շահերի, լեզվական, կրոնական, թե էթնիկական պատկանելության նկատմամբ հարգանքի միջոցով, այլ նաև տարբեր գաղափարների և հայտնագործությունների գնահատմամբ:

## Կարգապահություն

Դպրոցը պետք է զարգացնի աշակերտների սեփական պարտականությունների իմաստավորման և հասարակական կարգուկանոնի պահպանման հմտություն-կարողությունները: Ուսուցիչների օրինակը վճռորոշ է՝ դպրոցում խաղաղ և գործարար մթնոլորտ ստեղծելու համար: Դպրոցում նորմալ մթնոլորտ հաստատելու համար վճռորոշ է նաև աշակերտների մեջ արմատավորել այն միտքը, որ դպրոցն իրենցն է և իրենց է պատկանում: Միայն դրանում հավաստիանալով՝ հնարավոր է աշակերտները հրաժարվեն դպրոցական գույքը թե շենքը կանխամտածված վնասելուց, դպրոցներում կոպիտ ընդհարումներ սկսելուց և այլն:

Վարչական միջոցները, որոնք դպրոցը կիրառում է՝ աշակերտներին պատժելու համար, պետք է կազմակերպված լինեն միայն այնպես, որ չանարգվի նրանց արժանապատվությունը: Դպրոցում, կարգապահության տեսակետից, կարևոր ձեռնարկ պետք է լինեն դպրոցի ներքին կարգապահության կանոնները և վարքականոնը, որոնց պետք է ծանոթ լինեն բոլոր աշակերտները:

Հուզական և վարքային խնդիրներ ունեցող աշակերտների ուսումնական պլանը և ուսանման մեթոդները չպետք է տարբերվեն մյուս աշակերտների համար հատկացված պլանից: Այդպիսի աշակերտներին անհրաժեշտ են սոցիալական վարքի յուրահատուկ հրահանգներ: Սոցիալական հմտություն-կարողությունների ուսուցումը նշանակում է աշակերտի համար համապատասխան հաղորդակցական հմտության մշակում,

ինքնակարգապահության և հիմնախնդիրների վճռման կարողության ձևավորում: Հասակակիցների, մանկավարժի, ընտանիքի հետ փոխհարաբերություններ հաստատելու՝ աշակերտի ունակությունը կապված է նրա սոցիալական վարքի զարգացման և կարգավորման հետ: Սոցիալական հմտություն-կարողություններն աշակերտը յուրացնում է տարբեր սոցիալական միջավայրում՝ տուն, դպրոց, համայնք: Դպրոցը կարևորագույն ազդեցություն է գործում երեխայի հուզական, սոցիալական և վարքային զարգացման վրա:

Հուզական և վարքային հիմնախնդիրներ ունեցող աշակերտների համար պետք է ստեղծենք ոչ այնքան խիստ շրջապատ և նկատի ունենանք, որ ուշադրության ցրվածությունը, իմպուլսիվ վարմունքը, գերակտիվությունը բավական լայնորեն են տարածված երեխաների մոտ: Որոշ աշակերտներ ի վիճակի չեն երկար ժամանակ տրամադրել մեկ գործի կատարմանը, չունեն ուրիշին ունկնդրելու կարողություն և դասի ընթացքում անդադար խոսում են:

Վարքային և հուզական խնդիրներ ունեցող աշակերտների հետ հարաբերությունների ժամանակ ուսուցիչը պետք է հաշվի առնի. եթե աշակերտը հրաժարվում է ուսուցչի ցուցումները կատարելուց և ագրեսիվորեն է վարվում, ցանալի չէ նրան իսկույններ վտարել դասարանից կամ որոշ ժամանակով առանձնացնել: Մանկավարժը պետք է փորձի բացահայտել և հաշվի առնել աշակերտի հետաքրքրությունները, պահպանել նրա նկատմամբ բարեհաճ վերաբերմունքը: Եթե աշակերտը հաճախակի է վեճի է բռնվում հասակակիցների հետ և ագրեսիվ է, նախընտրելի է, մանկավարժը չարգելի մյուս աշակերտներին՝ շփվելու այդպիսի երեխայի հետ, այլ՝ նրան ժամանակ տա հանդարտվելու և փորձի սովորեցնել հասակակիցների հետ փոխհարաբերություններ հաստատելու կանոնները: Ցանկալի է, ողջ դասարանն ընդգրկել այս գործընթացին:

Եթե աշակերտը հաճախ չի սովորում դասերը և գործ ունենք ուսանման ունակության թուլացման հետ, ցանկալի է, մանկավարժը նման աշակերտին մշտապես վատ գնահատականներ չնշանակի կամ չպահանջի առաջադրանքների անպայման կատարում, այլ առաջադրանքը կազմի՝ հենվելով աշակերտի հետաքրքրությունների վրա: Նախընտրելի է, մանկավարժը մշակի այսպիսի աշակերտի ակադեմիական նվաճումների գնահատման անհատական մեթոդ:

Եթե աշակերտը դասի ժամանակ ընկճված է, ընդմիջմանը հարաբերություն չի հաստատում հասակակիցների հետ, մանկավարժը նրան հաճախ չպետք է անի դիտողություններ, այլ փորձի մտերմացնել հասակակիցների հետ: Հաճախ վճռորոշ նշանակություն է տրվում դպրոցում հասակակցի կողմից իր հասակակցին ցուցաբերվող օգնությանը: Այն դեպքում, եթե աշակերտի մոտ նկատվում են լուրջ հուզական և վարքային խախտումներ, ապա նման աշակերտի համար անհրաժեշտ է մշակել անհատական ուսումնական պլան և ցուցաբերել համապատասխան բուժօգնություն:

## Աշակերտների հաճախումը

Արդի կրթական գործընթացը նկատի ունի աշակերտների ակտիվ ընդգրկում սեփական գիտելիքի կառուցման գործընթացի մեջ: Սա նկատի ունի աշակերտների մասնակցություն ոչ միայն իրենց գիտելիքի կառուցմանը, այլև մասնակցություն հասակակիցների ուսանման գործընթացին: Դասի ժամանակ խմբային աշխատանքներ կատարելիս, նախագծերին մասնակցելիս, ներկայացումների պլանավորման թե

իրականացման ժամանակ աշակերտներն օգնում են միմյանց ավելի լավ հասկանալ տարբեր հայեցակարգերը, տիրապետել հմտություն-կարողություններին և ձևավորել վերաբերմունքներ: Համապատասխանաբար, աշակերտների հաճախման ապահովումը դպրոցի կարևորագույն հոգածության առարկան է:

Դպրոցն առավելագույն ջանք պետք է թափի նրա համար, որ աշակերտները կանոնավոր կերպով հաճախեն դասերին: Սահմանափակ հնարավորություններով աշակերտների հետ կապված՝ հնարավոր է, որ դպրոցները հոգ տանեն այս աշակերտների տնային կամ հիվանդանոցային պայմաններում պարբերական կրթական ծառայության ստանալու մասին:

## Հաճախման հաշվառումը

Աշակերտների հաճախման կանոնավոր կերպով հաշվառումը, նրա վերլուծումը և արձագանքումը դպրոցի տնօրինության պարտականությունն է: Բոլոր դասարանները (կամ ստորաբաժանումները) պետք է ունենան աշակերտների հաճախումը հաշվառելու մատյան՝ ըստ առարկաների, որտեղ տեղի կունենա յուրաքանչյուր դասարանի աշակերտների հաճախման հաշվառում: Այս մատյանը պահվում է դպրոցի վարչությունում՝ երրորդ դեմքերից պահպանված տեղում:

Աշակերտների դասերին հաճախելու ամենօրյա հաշվառումը վարելու համար պատասխանատու է դասղեկը: Դասղեկը պարտավոր է աշակերտների՝ դասերին հաճախելու վերաբերյալ հավաքած տեղեկությունը, դպրոցի տնօրենի կողմից համապատասխան վերլուծության և հիմնախնդիրներին արձագանքումն ապահովելու նպատակով, ամեն շաբաթ արտացոլի իր դասղեկական դասարանի աշակերտների դասերին հաճախելու մատյանում, որը նույնպես պահվում է վարչությունում՝ երրորդ դեմքերից պահպանված տեղում: Տնօրենը պարտավոր է սահմանել այն իրավագործ անձին, որը կարող է լինել նրա տեղակալներից մեկը և որը կկատարի աշակերտների դասերին հաճախման հաշվառումը:

## Բացակայությունների տեսակները

Աշակերտների կողմից դասերից բացակայելը կարող է լինել հարգելի կամ անհարգելի:

Հարգելի կհամարվի բացակայությունը, որը բխում է՝ աշակերտի հիվանդությունից, բժշկական հետազոտություններից, մոտ ազգականի վախճանվելուց, տարրական աստիճանում ծնողի կամ խնամակալի դպրոց տանել չկարողանալուց, աշակերտի կարճաժամկետ ճանապարհորդությունից, որը մեկ ուսումնական տարվա ընթացքում չպետք է գերազանցի 30 աշխատանքային օրը, աշակերտի պարտավորությունից ներկայանալ պաշտոնական պետական հաստատություններ, աշակերտի ընտանիքի անդամների հիվանդության ժամանակ՝ աշակերտի կողմից նրանց մասին հոգ տանելու անհրաժեշտության կամ այլ առանձնահատուկ դեպքերում, նաև, երբ աշակերտը մասնակցում է այնպիսի միջոցառման, որը վերաբերում է աշակերտի կարողություններին կամ գիտելիքի խորացմանը կամ ցուցաբերմանը: Հարգելի են համարվում նաև բացակայությունները, որոնք վերաբերում են սահմանափակ հնարավորություններով աշակերտներին:

Աշակերտի ծնողը, կանոնավոր ներկայացուցիչը նախօրոք տեղեկացնում են դասղեկին աշակերտի կողմից դասի անսպասելի բացակայության վերաբերյալ: Որպեսզի բացակայությունը համարվի հարգելի, ծնողը, օրինական ներկայացուցիչը պարտավոր են աշակերտի դպրոց ներկայանալուց հետո 5-օրյա ժամկետում ներկայացնել դիմում, որտեղ նա կնկարագրի իր զավակի կամ խնամարկյալի կողմից դասից բացակայելու պատճառները: Բացակայության հարգելի համարելու մասին որոշումն ընդունում է դպրոցի տնօրենը՝ դասղեկի ներկայացման հիման վրա: Եթե տնօրենը բացակայությունը համարում է անհարգելի, աշակերտի բացակայության հարցը քննարկման է փոխանցվում կարգապահական կոմիտեին, եթե աշակերտը կամ նրա օրինական ներկայացուցիչը չեն համաձայնում տնօրենի որոշմանը: Վերջնական որոշում է համարվում կարգապահական կոմիտեի կողմից ընդունված որոշումը, որը բողոքարկվում է դպրոցի հոգաբարձուների խորհրդում կամ բողոքարկման կոմիտեում՝ այսպիսինի գոյության դեպքում: Մինչև ծնողի, օրինական ներկայացուցչի կողմից դիմում ներկայացնելը կամ, եթե դասից բացակայելը չի բխում վերոթվարկյալ հարգելի պատճառներից, բացակայությունը համարվում է անհարգելի, եթե ծնողը, օրինական ներկայացուցիչը 5 օրում չի ներկայացնի համապատասխան դիմում:

Դասղեկը պարտավոր է հաճախման կանոնների մասին ճշգրիտ տեղեկություններ մատուցել ծնողին կամ աշակերտի օրինական ներկայացուցչին, ինչը վերահսկում է դպրոցի տնօրենը:

### Բացակայությունների քանակը

Եթե միջնակարգ աստիճանի աշակերտը մեկ ուսումնական տարվա ընթացքում անհարգելի պատճառով բաց է թողնում որևէ առարկայի համար 1 ուսումնական տարվա ընթացքում նախատեսված ժամերի 1/5-ը, աշակերտն այս առարկան հանձնում է էքստեռնատի ձևով և միայն այսպես է տեղափոխվում հաջորդ դասարան կամ աստիճան կամ մնում է նույն դասարանում:

Եթե միջնակարգ աստիճանի աշակերտը մեկ ուսումնական տարվա ընթացքում անհարգելի պատճառով բաց է թողնում որևէ առարկայի համար 1 ուսումնական տարվա ընթացքում նախատեսված ժամերի 1/2-ը, աշակերտն այս առարկան հանձնում է էքստեռնատի ձևով և միայն այսպես է տեղափոխվում հաջորդ դասարան կամ աստիճան կամ մնում է նույն դասարանում: Այս նորմը չի վերաբերում սահմանափակ հնարավորություններով աշակերտներին, որոնք, հնարավոր է, կրթական ծառայություն են ստանում տնային կամ հիվանդանոցային պայմաններում և/կամ սովորում են դպրոցի կողմից հաստատված կրթություն ստանալու այլընտրանքային ձևով:

Դպրոցի տնօրենը պարտավոր է դասղեկի ներկայացման հիման վրա, գրավոր տեղեկացնել աշակերտի ծնողին կամ օրինական ներկայացուցչին աշակերտի կողմից դասերի բացակայության փաստի սպասվելիք հետևանքի մասին:

Բացի այդ, եթե միջնակարգ աստիճանի աշակերտի կողմից 1 ուսումնական տարվա ընթացքում որևէ առարկայից հարգելի և անհարգելի պատճառով բացակայած ժամերի ընդհանուր գումարը կազմում է այս առարկայի համար 1 ուսումնական տարվա ընթացքում նախատեսված ժամերի 1/2-ը, աշակերտն այս առարկան հանձնում է էստեռնատի ձևով և միայն այդ դեպքում է տեղափոխվում դասարան/աստիճան կամ մնում է նույն դասարանում:

Հարգելի և անհարգելի պատճառով դասերից բացակայելու հիմունքով աշակերտին էքստենճատի քննության թողնելու նպատակների համար, 12-րդ դասարանում բացակայությունների տոկոսային քանակը հաշվարկվում է միայն 1-2 եռամսյակից:

Բազային աստիճանի աշակերտի նկատմամբ այս օրենքը տարածելու հարցը, և այն տարածելու դեպքում աշակերտի գնահատման կարգը որոշվում է դպրոցի կողմից ուսումնական տարվա սկզբում:

Դպրոցի տնօրենը պարտավոր է դասղեկի ներկայացնելու հիման վրա, գրավոր ձևով ժամանակին տեղեկացնել աշակերտի ծնողին, օրինական ներկայացուցչին աշակերտի կողմից դասերից բացակայելու փաստի սպասվելիք հետևանքի մասին:

## Անհատական արժանապատվության զարգացման կարևորումը

Դպրոցն առանձնապես պետք է կարևորի այնպիսի արժեքների զարգացումը, ինչպիսիք են արժանապատվությունը, արդարացիությունը, փոխհարգանքը, ուրիշի կարծիքի ունկնդրումն ու ընդունումը: Մեծ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի տարածված ախտի իսպառ վերացմանը, ինչպիսին է գրագողությունը (կամ ուրիշի կարծիքների յուրացումը): Դպրոցը պետք է ստեղծի այնպիսի մթնոլորտ, որտեղ ուրիշի՝ ուսուցչի թե՛ աշակերտի, գիտնականի թե՛ գրողի մտքերը՝ որպես սեփական հրամցներ, ամոթանք է համարվում: Աշակերտը պետք է գիտակցի, որ ուրիշի աշխատանքի յուրացումը և, որպես սեփական նվաճում հայտարարելը, նույնպիսի գողություն է, ինչպիսին ուրիշի իրի յուրացումը: Հատկանշական է, որ ուսուցիչը անձնական օրինակով ցույց տա աշակերտին, թե ի՞նչ է նշանակում արդարացիությունը և փոխադարձ հարգանքը:

## Տարբեր հնարավորություններ և կարողություններ ունեցող աշակերտների առավելագույն ընդգրկումը ուսումնական գործընթացին

Դպրոցը և մանկավարժը պետք է աշխատեն ցանկացած հակում, հնարավորություն թե՛ հետաքրքրություն ունեցող աշակերտի առավելագույն ընդգրկել ուսումնական գործընթացում: Դրա համար հատկանշական է, որպեսզի հաշվի առնվեն աշակերտների մոտ հանդիպող բազմաթիվ առանձնահատկություններ: Որոշ աշակերտներ դժվարանում են հստակորեն խոսել: Նման դեպքում մանկավարժը պետք է մեծ ուշադրություն դարձնի աշակերտին, զգացնել տա, որ հետաքրքրում է նրա զրույցը, ուշադիր հետևի նրա դատողությանը, չընդհատի խոսելու հիմնախնդիր ունեցող աշակերտի զրույցը, նման աշակերտին ակտիվորեն ընդգրկի դասարանային բանավեճերում, ուշադրությամբ ունկնդրի նրան և խրախուսի: Ցանկալի է, խոսելու հիմնախնդիր ունեցող աշակերտին մանկավարժը միաժամանակ չառաջադրի շատ հարցեր, որպեսզի դրանց չհետևի երկար պատասխան:

Դպրոցական տարիքի երեխաների շրջանում ձախիլիկների թիվը տատանվում է 15-ից մինչև 29%-ը: Դա նշանակում է, որ դպրոցի 100 աշակերտից առնվազն 15-ը ձախիլիկ է: Ձախիլիկ աշակերտի հետ առնչվելիս՝ ուսուցիչը պետք է նկատի ունենա, որ տարրական աստիճանի դասարանների աշակերտները, այդ թվում ձախիլիկները, անձամբ պետք է ընտրեն, թե որ ձեռքով են գերադասում գրել, նկարել և այլ առաջադրանքներ կատարել:

Չախլիկ երեխային աջ ձեռքով գրել, նկարել և այլ սոցիալապես կարևոր գործունեություններ կատարել հարկադրելը կարող է բացասաբար անդրադառնալ երեխայի հոգեկան զարգացման վրա: Երեխայի ձախլիկությունը չպետք է դառնա անառողջ ուշադրության և ծաղրանքի առարկա: Չախլիկի վատ գեղագրությունը, գրելու դանդաղ տեմպը չպետք է լինեն նրա ակադեմիական առաջադիմության բացասական գնահատման չափանիշ:

Սահմանափակ հնարավորություններով աշակերտի գնահատման ժամանակ տեղի է ունենում անհատական ուսումնական պլանի հաշվառում, որտեղ գնահատումը տեղի է ունենում այն համակարգով, որը հարմարեցված է այս աշակերտի հնարավորություններին:

## **Պարտադիր և կամրնտրական առարկաներ Առարկաների և խմբերի գլխավոր սկզբունքները**

Վրացական լուսավորական ավանդույթի և կրթության գիտությունների ժամանակակից պահանջների հաշվառումով, I- XII դասարաններում առանձին առարկաների ուսանում-ուսուցումը հենվում է հետևյալ սկզբունքների վրա.

## **Ա. Ուսումնական առարկաները բաժանվում են վեց հիմնական խմբերի.**

1. Վրաց լեզու և գրականություն (Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունում՝ արխազերեն և վրացերեն)
2. Մաթեմատիկա
3. Բնական գիտություններ
4. Վրաստանի պատմություն, Վրաստանի աշխարհագրություն և այլ հասարակական գիտություններ
5. Օտար լեզուներ
6. Ֆիզիկական, աշխատանքային և գեղագիտական դաստիարակություն:

Ուսումնական առարկաները խմբավորելու գլխավոր նպատակը բազմազան առարկայական ծրագրի համակարգումն է: Առարկայական խմբերը պարունակում են համանման նպատակներ և ուսուցման բնագավառներ ունեցող առարկաներ:

Առարկաների դասավորումը առարկայական խմբերի, մեզ հնարավորություն է ընձեռում որոշելու՝ ժամերի բաշխման սկզբունքը:



## **Բ. Յուրաքանչյուր առարկայական խումբ դասավանդվում է դպրոցի բոլոր երեք աստիճաններում՝ աշակերտի բազմակողմանի զարգացման ապահովման համար:**

Ժամանակակից աշխարհում հաջողության հասնելու համար, մարդուն անհրաժեշտ է բազմակողմանի զարգացում, ինչը պետք է արտացոլվի դպրոցական ծրագրի և առարկայական խմբերի ժամային բաշխման վրա:

## **Գ. Տարրական աստիճանում առարկայական խմբերի մեջ մտնող առարկաների ուսուցումն ավելի ինտեգրված է, քան բազային և միջնակարգ աստիճաններում:**

Մտածողության զարգացմանը զուգընթաց, աշակերտներին ընձեռվում է՝ աշխարհում ընթացող իրադարձություններին առավել մանրամասնորեն ծանոթանալու, դրանք ուսումնասիրելու, խորապես վերաիմաստավորելու և հասարակական կյանքում ակտիվորեն ընդգրկվելու հնարավորություն: Այդ պատճառով տարրական աստիճանում առարկաները դասավանդվում են առավել ինտեգրված, իսկ բազային և միջնակարգ աստիճաններում՝ առավել մասնագիտացված: Ուսումնական գործընթացում այս առարկաների ուսումնասիրման արդյունքում ստացած գիտելիքի հետ միասին, խիստ կարևորվում են հմտություն-կարողությունների և վերաբերմունքների մշակումն ու զարգացումը:

X-XII դասարաններում տեղի է ունենում աշակերտների կողմից սեփական մտավոր հակումների սահմանում և զարգացում: Այս դասարաններում աշակերտները հնարավորություն են ունենում, պարտադիր առարկաների հետ միասին (վրաց լեզու և գրականություն, Վրաստանի պատմություն, ու մաթեմատիկա), ընտրել նաև բնագիտական, հասարակագիտական կամ գեղագիտական-աշխատանքային ուղղության առարկաներ:

## **Առարկայական խմբեր**

### **Վրաց լեզու և գրականություն**

## **Արխագիայի Ինքնավար Հանրապետությունում՝ արխագերեն և վրացերեն**

Վրաց լեզվի և գրականության ուսումնասիրումը պետք է զարգացնի դեռահասի հիմնական հաղորդակցական կարողությունները (գրել, կարդալ, ունկնդրել, խոսել) Վրաստանի պետական լեզվով: Այս առարկայական խմբի գլխավոր նպատակներից մեկն է դեռահասի մեջ մշակել հարգանք գրական ժառանգության նկատմամբ, ընթերցանության նկատմամբ՝ սեր, նպաստել գեղարվեստական ստեղծագործության գեղագիտական ընկալման և գնահատման կարողության ձևավորմանը: Այս խնդրի լուծման հարցում մեզ կօգնի վրաց գրականության ուսուցման գործընթացում թեմատիկորեն և բովանդակությամբ համանման արտասահմանյան գրականությանը ծանոթացումը և դրանց միջև զուգահեռների որոնումը: Առարկայական խմբի գլխավոր գերակայություններից մեկը գրավոր և բանավոր խոսքի կուլտուրայի զարգացումն է: Աշակերտի մեջ պետք է մշակվի սեփական մտքերը տրամաբանական



հաջորդականությամբ արտահայտելու և տարբեր բովանդակության ու նշանակության տեքստեր գրելու կարողություն:

Վրաց լեզվի և գրականության առարկայական խումբը միավորում է վրացերենի, որպես մայրենի և վրացերենի, որպես երկրորդ լեզվի ուսումնական պլանները: Վրացերենը, որպես երկրորդ լեզու, ուսումնասիրվում է հիմնականում այն աշակերտների կողմից, որոնց համար վրացերենը մայրենի լեզու չէ կամ, որոնց համար վրացալեզու շրջապատը սահմանափակ է և ուսումնական լեզուն վրացերենը չէ: Թերևս, հենց այստեղ պետք է հիշենք, որ այն աշակերտների կողմից, ովքեր մեծանում են ոչ վրացալեզու ընտանիքներում, բայց՝ սովորում են վրացալեզու դպրոցներում, հնարավոր է, երկու ուսումնական պլաններն էլ լինեն հաղթահարելի:

## Մաթեմատիկա

Մաթեմատիկական առարկաների դասավանդման հիմնական նպատակը դեռահասի մեջ հետազոտության հմտության, ինչպես նաև վերլուծական, տրամաբանական, համակարգային և խորհրդանշային մտածողության մշակումն է: Մաթեմատիկայի ուսուցման շնորհիվ աշակերտը ձեռք է բերում այնպիսի հմտություն-կարողություններ, որոնք կօգնեն նրան՝ կենսական և գործնական հիմնախնդիրները լուծելու հարցում:

## Բնագիտական գիտություններ

Բնագիտական գիտությունները դեռահասի մեջ պետք է մշակեն հետազոտության, աշխարհի և շրջակա միջավայրի ուսումնասիրման, դրանց պաշտպանության և պահպանման հմտություն-կարողություններ: Աշակերտն իրազեկվում է գիտական մեթոդներին և ուսումնասիրում դրանց կիրառման միջոցները՝ աշխարհը ընկալելու և վերաիմաստավորելու համար, ինչպես նաև ծանոթանում է գիտությունների նվաճումներին և առօրյա կյանքի հետ դրանց կապին: Բնագիտական առարկաների ուսուցման գլխավոր նպատակներից մեկն այն կարողությունների մշակումն է, որոնք օգնում են մարդուն որոշել իր տեղը բնական միջավայրում և ուշադրությամբ հետևել ընթացիկ բնական գործընթացներին: Այս առարկայական խմբի մեջ են մտնում հետևյալ առարկաները. քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն և տարրական դասարաններում՝ բնագիտության դասընթացը: Այս առարկայական խմբի հետ միասին ուսուցանվում են նաև ֆիզիկական աշխարհագրության հարցերը:

## Վրաստանի պատմություն, Վրաստանի աշխարհագրություն և հասարակական գիտություններ

Այս առարկայական խմբի գլխավոր նպատակն է դեռահասի՝ որպես Վրաստանի քաղաքացու մեջ մշակել աշխարհում իր տեղը որոշելու կարողություն՝ աշխարհագրական, պատմական, կրոնական, քաղաքական, մշակութային թե էթնիկական իրականության հաշվառումով: Գիտելիքների և տեղեկատվության մատակարարման հետ մեկտեղ, այս առարկայական խմբի նպատակն է՝ այնպիսի հմտություն-կարողությունների մշակումը, որոնք աշակերտին կպատրաստեն ակտիվ և պատասխանատու քաղաքացիության համար և որպես հիմք կդրվեն՝ սեփական և հասարակական շահերի գիտակցմանը, սեփական և այլ մշակույթների և դրանց

ներկայացուցիչների նկատմամբ հարգանքին ու հանդուրժողականությանը:

Այս առարկայական խումբը կազմում են. պարտադիր առարկաներ՝ Վրաստանի պատմություն, Վրաստանի աշխարհագրություն, քաղաքացիական դաստիարակություն, կամընտրական դասընթացներ՝ տնտեսագիտություն, պետություն և քաղաքացիություն, իրավունք, կրոնների պատմություն:

## Օտար լեզուներ

Օտար լեզուների առարկայական խումբը Վրաստանի քաղաքացու մեջ, պետական լեզվի հետ միասին, պետք է զարգացնի առնվազն ևս երկու լեզվով հաղորդակցության կարողություն: Այս առարկայական խմբի գլխավոր խնդիրներից մեկն է մյուս լեզվական խմբերի ներկայացուցիչների հետ գրավոր և բանավոր հարաբերությունների կարողության զարգացումը: Ինչպես մյուս բոլոր առարկայական խմբերում, այստեղ ևս, հիմնական ուշադրությունը պետք է բևեռվի ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառելու կարողության վրա:

Ազգային ուսումնական պլանը նախատեսում է ռուսերենի, անգլերենի, գերմաներենի և ֆրանսերենի ուսումնական պլաններ, թերևս դպրոցներին տրվում է այս լեզուների փոխարեն կամ լրացուցիչ որևէ այլ լեզու ուսուցանելու իրավունք:

## Ֆիզիկական, աշխատանքային և գեղագիտական դաստիարակություն

Այս առարկայական խմբի նպատակներն են առողջ սպրելակերպի հաստատումը, խմբային աշխատանքի, փոխօգնության և համագործակցության կարողությունների մշակումը, աշխատանքային, գործնական և արհեստավորական հմտություն-կարողությունների զարգացումը: Այս առարկայական խումբը դեռահասների մեջ պետք է զարգացնի արվեստի մնուշներ ստեղծելու և դրանք գնահատելու, հասկանալու ունակություն:

Այս առարկայական խմբի մեջ են մտնում երաժշտությունը, ինտեգրված կերպարվեստն ու կիրառական արվեստը, աշխատանքային դասընթացն ու ֆիզիկական դաստիարակությունը: Դրա հետ միասին, կամընտրական առարկաների տեսքով, միջին աստիճանում այս առարկայական խմբի մաս են կազմում նաև հետևյալ առարկաները՝ թատերական արվեստը, արվեստի տեսական և գործնական դասընթացները, երաժշտությունն ու զժազրությունը:

## Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ

Դպրոցների համակարգչավորման (համակարգիչների զանգվածային գործածության գործընթացի) ծրագրի ֆոնի վրա ավելի հավանական է դառնում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ընդգրկումը ուսումնական գործընթացում: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ուսուցման գերակայությունն է աշակերտների մեջ զարգացնել այս տեխնոլոգիաների կիրառման համար անհրաժեշտ հմտություն-կարողություններ, տարբեր առարկաների ուսուցման ժամանակ՝ ինտեգրման ճանապարհով: Այդ պատճառով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները չեն բաժանվում առանձին առարկայական խմբերի և պատկանում են, այսպես կոչված, միջանցիկ ուսումնական գերակայություններին:

**Պարտադիր առարկաների ուսուցումը՝ աստիճանների համաձայն**

**Պարտադիր առարկաների դասավանդման գծապատկերը**

Առարկայական խմբեր	Առարկա	Տարրական						Բազային			Միջնակարգ			
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
Վրաց լեզու և գրականություն	Վրաց լեզու և գրականություն													
Մաթեմատիկա	Մաթեմատիկա													
Վրաստանի պատմություն, Վրաստանի աշխարհագրություն և հասարակական գիտություններ	Վրաստանի և աշխարհի պատմություն													
	Քաղաքացիական կրթություն												X	X
	Վրաստանի և աշխարհի աշխարհագրություն													X
Բնագիտական գիտություններ	Բնագիտություն													
	Կենսաբանություն													X
	Ֆիզիկա													X
	Քիմիա													X
Օտար լեզուներ	Առաջին օտար լեզու													
	Երկրորդ օտար լեզու													
Գեղագիտական, աշխատանքային և ֆիզիկական դաստիարակություն	Կերպարվեստ և կիրառական արվեստ, աշխատանքային ուսուցում												X	X
	Երաժշտություն												X	X
	Ֆիզիկական դաստիարակություն													

- առարկայի պարտադիր ուսուցում
- X – կամընտրական առարկաներ

## Վրաց լեզու և գրականություն

- Վրաց լեզվի և գրականության, մաթեմատիկայի և ֆիզիկական դաստիարակության ուսուցումը պարտադիր է I-XII դասարաններում:

## Վրաստանի պատմություն, Վրաստանի աշխարհագրություն և հասարակական գիտություններ

- Վրաստանի և աշխարհի պատմությունը պարտադիր դասավանդվում է 5-12 դասարաններում:
- Վրաստանի և աշխարհի աշխարհագրությունը պարտադիր դասավանդվում են 5-11 դասարաններում:
- Զաղաքացիական կրթությունը պարտադիր դասավանդվում է 5-10 դասարաններում:
- Վրաստանի աշխարհագրությունը և քաղաքացիական կրթության հարցերը 1-6 դասարաններում ինտեգրված է բնագիտության դասընթացում:

## Օտար լեզուներ

Առաջին օտար լեզվի ուսանումը աշակերտը սկսում է III դասարանում, իսկ երկրորդինը՝ VII դասարանում: Տասներորդ դասարանից թույլատրվում է թողնել առաջին օտար լեզուն և սկսել երրորդ օտար լեզվի ուսանումը (X-XII դասարաններում): Դա չի բացառում այն, որ մինչև երրորդ դասարան դպրոցները սկսեն օտար լեզվի ուսուցումը կամ մինչև յոթերորդ դասարան դասավանդեն երկու օտար լեզու, եթե դպրոցը որոշում է, որ նա ունի դրա հնարավորությունը և տեսնում է այս առարկաների առաջարկման նշանակությունը: Թեպետ, առաջին երկու դասարաններում երաշխավորված չէ օտար լեզվի ուսուցումը: Բացի այդ, դպրոցն ունի իր աշակերտներից երկու օտար լեզուներից ավելի ուսուցանելու իրավունք:

## Բնագիտական առարկաներ

- Բնագիտության ինտեգրված դասընթացը պարտադիր է I-VI դասարաններում:
- Բնագիտական առարկաները՝ քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն դասավանդվում է պարտադիր է VII-XII դասարաններում, յուրաքանչյուրը դասավանդվում է 4 տարվա ընթացքում պարտադիր ձևով: XII դասարանում աշակերտը բնագիտական առարկաներից ընտրում է առնվազն մեկ կամ առավելագույնը երկու առարկա:

## Գեղագիտական, աշխատանքային և ֆիզիկական դաստիարակություն

- Արվեստի դասընթացը դասավանդվում է 1-10-րդ դասարաններում որպես պարտադիր առարկա: Այն դպրոցը, որն ունի համապատասխան բազա, ունի

մարդկային ռեսուրսներ և տեսնում է դրա անհրաժեշտությունը, կարող է կրճատել արվեստի ուսուցումը, օրինակ՝ մեկ եռամսյակով և այս առարկայի մասը տրամադրի աշխատանքի ուսուցմանը, որտեղ ուսուցանում են ձեռագործ, տարբեր աշխատանքային գործիքների օգտագործում, խոհարարություն և այլն:

- 8-րդ և 9-րդ դասարաններում արվեստի և երաժշտության ուսուցումը պարտադիր է գոնե մեկ եռամսյակի ընթացքում կամ դպրոցի որոշումով հնարավոր է դասավանդվի երկու եռամսյակի ընթացքում: Այն դասարանում, որտեղ արվեստը ուսուցանվում է երկու եռամսյակի ընթացքում, երաժշտությունը դասավանդվում է մեկ եռամսյակի ընթացքում և ընդհակառակը:

#### Միջնակարգ աստիճանի գծապատկեր (X-XII դասարաններ):

- Պարտադիր է X-XII դասարաններում վրաց լեզվի և գրականության, պատմության, մաթեմատիկայի, երկու օտար լեզուների և ֆիզիկական դաստիարակության առարկաների ուսուցանում:
- X դասարանում, մեկական եռամսյակ պարտադիր ուսուցանվում է.
  - Քաղաքացիական կրթության ինտենսիվ դասընթաց
  - Կերպարվեստ և կիրառական արվեստ
  - Երաժշտություն
- XI դասարանում աշխարհագրությունը պարտադիր առարկա է:
- XI-XII դասարաններում աշակերտին հնարավորություն է ընձեռվում, պարտադիր առարկաները ուսանելուց բացի, ընտրել իր համար ցանկալի առարկաներ՝ երկու առարկայական խմբերից. Վրաստանի պատմություն, Վրաստանի աշխարհագրություն և հասարակական գիտություններ և գեղագիտական, աշխատանքային և ֆիզիկական դաստիարակություն:
- XII դասարաններում աշակերտին հնարավորություն է ընձեռվում, պարտադիր առարկաները ուսանելուց բացի, ընտրել իր համար ցանկալի մեկ կամ երկու բնագիտական առարկա: Քիմիան պարտադիր է 12-րդ դասարանում և այս դասարանում այն լրացուցիչ ընտրելու դեպքում, այն դասավանդվում է խորացված ձևով:
- Յուրաքանչյուր կամընտրական բլոկում դպրոցը պետք է ապահովի աշակերտների համար առնվազն երկու առարկայի առաջարկում: Նվազ համակազմ ունեցող դպրոցները, որոնք, հնարավոր է չունեն՝ XI-XII դասարանների աշակերտներին ընտրության լայն ազատություն առաջարկելու հնարավորություն, իրավունք ունեն անձամբ որոշելու՝ վերը թվարկված կամընտրական առարկաներից որ չորսն առաջարկեն իրենց աշակերտներին: Լավագույն դեպքում, դա տեղի է ունենում աշակերտների հետաքրքրությունների առավելագույն հաշվառումով:

Կամընտրական առարկաներ՝ ըստ առարկայական խմբերի

Վրաստանի պատմություն, Վրաստանի աշխարհագրություն և հասարակական գիտություններ	Բնագիտական գիտություններ (միայն 12-րդ դասարանում )	Գեղագիտական, աշխատանքային և ֆիզիկական դաստիարակություն
1. Տնտեսագիտություն 2. Պետություն և քաղաքացիություն 3. Իրավունք	1. Զինիա 2. Ֆիզիկա 3. Կենսաբանություն	1. Երաժշտություն 2. Կերպարվեստ և կիրառական արվեստ (գործնական դասընթաց) 3. Արվեստի պատմություն (տեսական դասընթաց) 4. Գծագրություն 5. Թատերական արվեստ
4. Գլոբալ հիմնախնդիրների աշխարհագրություն (միայն XII դասարանում)		

Վերևում բերված յուրաքանչյուր առարկա իրենից ներկայացնում է մեկամյա կամ 2 եռամսյակային ինտենսիվ դասընթաց: Ընդհանուր հաշվով, XI-XII դասարաններում աշակերտը յուրաքանչյուր առարկայական խմբից պետք է ուսանի առնվազն մեկ առարկա և հնարավոր է երկուսը:

- Տասներկուերորդ դասարանի վերջին եռամսյակը պետք է տրամադրվի միայն պարտադիր առարկաներին և բարձրագույն ուսումնական հաստատության համար ընդունելության քննություններին նախապատրաստմանը: Դպրոցը հենց սկզբից պետք է որոշի, թե որ կամընտրական առարկայի ուսուցումն է մտադիր դադարեցնել երրորդ եռամսյակում: Այս դեպքում կամընտրական առարկայի գումարային ժամերը կբաշխվեն երկու եռամսյակների վրա:
- Գլոբալ հիմնախնդիրների աշխարհագրությունը տասներկուերորդ դասարանում կամընտրական դասընթաց է, և այն կարելի է ուսուցանել ինչպես բնագիտական, այնպես էլ հասարակական գիտելիքների բլոկի շրջանակներում:

Տասնմեկ-տասներկուերորդ դասարաններում դպրոցը կամընտրական ակադեմիական առարկաների փոխարեն հնարավոր է աշակերտին առաջարկի արհեստավորական կրթական ծրագիր: Արհեստավորական կրթական ծրագիրը պետք է կազմված լինի մասնագիտական ուսուցման կենտրոնների և ՀԻԻԴ Ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնի հետ խորհրդատվությունների հիման վրա: Աշակերտը, որը կանցնի արհեստավորական կրթական ծրագիր և

պարտադիր առարկաները, կստանա լրիվ ընդհանուր կրթությունը հավաստող ավարտական վկայական և, եթե մասնագիտական ուսուցման կենտրոնի համապատասխան հանձնաժողովին կհանձնի քննություն, կստանա արհեստավորական կրթությունը հավաստող հատուկ սերտիֆիկատ:

Եթե դպրոցն ունի նրա հնարավորություն, որ դասավանդի չորսից ավելի առարկա, այս տեսակետից սահմանափակում գոյություն չունի: Ցանկացած դպրոց իրավունք ունի, բացի պարտադիր նվազագույնից, ուսուցանել ցանկացած քանակությամբ առարկա, եթե նկատի կունենա աշակերտների ֆիզիկական և մտավոր հնարավորությունները:

**Ազգային ուսումնական պլանում չնախատեսված ֆակուլտատիվ առարկաները**

Դպրոցը իրավասու է աշակերտներին առաջարկել Ազգային ուսումնական պլանով չնախատեսված առարկաներ: (Օր. ` պար, հանդուրժողականության ծրագիր, լուսանկարչություն, աստղագիտություն, առողջ ապրելակերպ, կրոնների պատմություն և այլն): Այս առարկաների ուսուցումը հենց տարվա սկզբից պետք է համաձայնեցվի հոգաբարձուների խորհրդի հետ: Ուսումնական պլանը պետք է պարունակի հետևյալ պարտադիր բաղադրամասերը.

1. Առարկայի նպատակները և խնդիրները և հիմնավորում, թե որքանով են ծառայում այս նպատակներն ու խնդիրները ընդհանուր կրթության ազգային նպատակներում տրված գաղափարներին:

2. Առարկայի կազմակերպման ձևերը (առարկայի մանկավարժի ով լինելը, դասի ծանրաբեռնվածությունը, առաջադրանքների բնույթն ու հաճախությունը, գնահատման չափանիշները):

**Առարկաների ժամային բաշխման հիմնական սկզբունքները**

**Ժամային ցանց**

Ժամային ցանցը սահմանում է աշակերտների պարտադիր և առավելագույն ծանրաբեռնվածության չափը: Ժամային ցանցը որոշում է Ազգային ուսումնական պլանում տրված պարտադիր առարկաների ուսուցման պարտադիր տևողությունը:

**Ուսումնական օրվա և դասի տևողությունը**

Դեռահասի ֆիզիկական և հոգեբանական հնարավորությունների հաշվառումով, երաշխավորված ծանրաբեռնվածության (դասերին անցկացրած աստղաբաշխական ժամերի) առավելագույն քանակը:

Դասարան	1	2	3	4-5	6-7	8	9-12
Առավելագույն թույլատրելի ժամեր (աստղաբաշխական)	3	4	4	4	5	5	5-6

Դասերի քանակն ավելանում է դեռահասի զարգացմանը զուգընթաց: Դասի տևողությունը 45 րոպե է: Բացառություն է կազմում առաջին դասարանը, որտեղ դասը տևում է 35 րոպե: Ընդմիջումները տևում են առնվազն 10 րոպե:

Բացառությունը հնարավոր է թույլատրելի լինի ծայրահեղ պայմանների ժամանակ (սառնամանիք, առանձնահատուկ շոգեր և այլն), երբ դպրոցը կարող է դասերի տևողությունը փոխել կարճատև ժամկետով՝ ուսումնական օրը կրճատելու նպատակով:

Դպրոցների ազատությունը՝ ժամերը բաշխելիս (ֆակուլտատիվ ժամեր)

Դպրոցին իրավունք է վերապահվում՝ յուրաքանչյուր դասարանում, պարտադիր ժամերից բացի, ավելացնել որոշակի քանակության ժամեր, որոնք կիրառում է աշակերտների շահերի հաշվառումով՝ ֆակուլտատիվ դասընթացներ թե լրացուցիչ դասեր անցկացնելու համար: Ավանդաբար, դպրոցում նման առարկաներ էին կրոնի պատմությունը, պարը, նկարչությունը և այլն:

Մինչև 2007-2008 ուսումնական տարին, ֆակուլտատիվ ժամերի քանակը ժամային ցանցում գրված էր՝ որպես առավելագույն և պարտադիր ժամերի միջև տարբերություն: Նոր ժամային ցանցում այս ժամերի կոնկրետ սահմանափակում այլևս զոյություն չունի: Դպրոցը, սեփական հնարավորությունների սահմաններում, պետք է ավելացնի ժամերը ֆակուլտատիվ առարկաների համար կամ պարտադիր առարկաների ուսուցումը խորացնելու համար: Ժամերն ավելացնելիս, դպրոցը պետք է հաշվի առնի ուսումնական օրվա և դասի երաշխավորված տևողությունը և աշխատի, որ ժամերն ավելացնելիս, ուշադրությունը բևեռի նրա վրա, որպեսզի աշակերտներն ընդմիջումներին պատշաճ հանգստանալու հնարավորություն ունենան:

Դպրոցն իրավասու է նաև, նախարարության կողմից մատուցված երաշխավորված ժամային ցանցի շրջանակներում, ժամերի 25%-ը առարկաների միջև վերաբաշխել սեփական հայեցողությամբ: Ժամերը բաշխելիս, կարելի է նաև հանրագումարային ժամերի տեղափոխություններ: Օրինակ, առարկաներից մեկին երաշխավորված ժամային ցանցում տրամադրվում է շաբաթը 4 ժամ: Դա նշանակում է, որ ընդհանուր հաշվով, մեկ տարում այս առարկան դասավանդվում է  $4 \cdot 36$  (շաբաթների քանակը) = 144 ժամվա ընթացքում: Դպրոցը կարող է փոխել այս առարկայի ժամային ծանրաբեռնվածությունը այնպես, որ, ասենք, ավելացնի մինչև 150 ժամ կամ նվազեցնի մինչև 120 ժամ և այլն..., ելնելով սեփական անհրաժեշտություններից: Դա նշանակում է, որ դպրոցը պետք է լավ պլանավորի իր դասացուցակը, քանզի որոշ եռամսյակներում կարելի է այս առարկային շաբաթվա ընթացքում տրամադրել 4 ժամ, իսկ որոշ շաբաթներում 5 կամ 3 և այլն:



## Ընդհանուր կրթական գերակայություններ

### Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ

Այն դպրոցներում, որտեղ կա համապատասխան համակարգչային տեխնիկա, յուրաքանչյուր աշակերտ, ավարտական դասարանի համար համակարգիչների օգտագործման բազիսային հմտություն-կարողություններն ուսումնասիրելու նպատակով, պետք է անցնի առնվազն 36-ժամյա դասընթաց: Եթե դպրոցն ունի հնարավորություն, որպեսզի նախորդ դասարանում գտնվող աշակերտներին ևս օգնի անցնել նման դասընթաց, ապա այսպիսի օրենքը կվերաբերի նաև նրանց և այլն (որքան ավելի շատ հնարավորություն ունի դպրոցը, այնքան ավելի շատ դասարաններ է ընդգրկում):

Ինչ վերաբերում է այս 36 ժամի վերաբաշխմանը, այստեղ արդեն դպրոցին տրվում է լրիվ ազատություն՝ անձամբ որոշելու, թե ինչ գծապատկերով է դասավանդելու աշակերտներին: Կարևոր է, որ աշակերտներն ունենան որոշ ժամանակ անհատականորեն համակարգչի մոտ աշխատելու հնարավորություն: Դրա համար, կարելի է դասարանային ենթաբաժինը մասնատել էլ ավելի փոքր խմբերի: Կարելի է նաև աշակերտների մի մասը, ասենք, ինտենսիվորեն աշխատի մի եռամսյակի ընթացքում, իսկ հաջորդ եռամսյակում դրան փոխարինի աշակերտների մյուս մասը: Կամ պարտադիր չէ, որպեսզի յուրաքանչյուր աշակերտի համար՝ ողջ տարվա հաշվով, այս 36 ժամը վերաբաժանվի՝ շաբաթը մեկական ժամի տեսքով: Բացի այդ, թույլատրելի է և երաշխավորված, որ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներն ուսուցանվի ոչ թե որպես առանձին առարկա, այլ մյուս առարկաների շրջանակներում:

Նշանակալի է, որ դպրոցը առավելագույնս օգտագործի գոյություն ունեցած համակարգչային տեխնիկան: Սա նկատի ունի նաև այն, որ համակարգիչները (համակարգչային լաբորատորիայում թե այլուր) աշակերտների համար մատչելի պետք է լինեն նաև դասերից հետո, որպեսզի կատարեն հանձնարարությունները, խորացնեն իրենց հմտություն-կարողությունները կամ, ըստ իրենց հայեցողության, օգտագործեն այս տեխնիկան հաղորդակցման, լրացուցիչ նախագծերի պատրաստման թե այլ կրթական նպատակների համար:

### Գրադարանային և այլ անհատական աշխատաժամանակ

Ցանկալի է, որ աշակերտներին ընտելացնենք անհատական աշխատանքի՝ գրադարանում: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի դրա հնարավորությունն ունեցող դպրոցն առանձնացնի հատուկ ժամանակ՝ գրադարանում աշակերտների աշխատելու համար: Բացի այդ, շատ

կարևոր է, որպեսզի մանկավարժները աշակերտներին հանձնարարեն առաջադրանքներ, որոնք նախատեսում են գրադարաններից օգտվել: Ցանկալի է, որ դպրոցը գրադարանի բազայի վրա ստեղծի համապատասխան պայմաններ նրա համար, որ աշակերտները կարողանան դասերից հետո մնալ գրադարանում և պարապել, եթե այդ նրանց համար ավելի հարմար է:

**2. 2 ըդ գլուխը ձևակերպվի հետևյալ խմբագրմամբ.**

## 2. 2-րդ գլուխը ձևակերպվի հետևյալ խմբագրմամբ.

## Գլուխ II

Ուսումնական պլանի համապատասխան ժամային ցանց՝  
ցանկացած հոսքի (վրացալեզու և ոչ վրացալեզու: հանրակրթական  
հանրային դպրոցների համար

Առարկա, դասարան	I	II	III	IV	VII	VIII	IX	X	XI	XII	
<b>Վրաց լեզու և գրականություն և մայրենի լեզու և գրականություն</b>											
Վրաց (լեզու և գրականություն)	7 (252)	7 (252)	5 (180)	5 (180)		5 (180)	5 (180)	5 (180)	5 (180)	5 (180)	
Վրացերենը՝ որպես երկրորդ լեզու ( ոչ վրացալեզու մասնաճյուղի համար)	3 (108)	3 (108)	4 (144)			3 (108)	3 (108)	3 (108)	3 (108)	3 (108)	
Մայրենի լեզու (ոչ վրացալեզու մասնաճյուղի համար)	5-8 (180-288)	5-8 (180-288)	5-8 (180-288)			5-6 (180-216)	5-6 (180-216)	5-6 (180-216)	4-5 (144-180)	4-5 (144-180)	4-5 (144-180)
<b>Մաթեմատիկա</b>											
Մաթեմատիկա	5 (180)	5 (180)	5 (180)	5 (180)		4 (144)	4 (144)	4 (144)	5 (180)	5 (180)	4 (144)
<b>Օտար լեզուներ</b>											
Առաջին օտար լեզու			3 (108)	3 (108)		3 (108)	3 (108)	3 (108)	2 (72)	2 (72)	2 (72)
Երկրորդ օտար լեզու						4 (144)	4 (144)	4 (144)	3 (108)	3 (108)	3 (108)
<b>Վրաստանի պատմություն, Վրաստանի աշխարհագրություն և այլ հասարակական գիտություններ</b>											
Վրաստանի և աշխարհի պատմություն						3 (108)	3 (108)	4 (144)	2 (72)	3 (108)	3 (108)

Աշխարհագրություն					2 (72)	2 (72)	2 (72)	2 (72)	3 (108)	
Քաղաքացիական կրթություն							2 (72)	5 (60)		
<b>Բնագիտական գիտություններ</b>										
Բնագիտություն	4 (144)	4 (144)	4 (144)	4 (144)						
Կենսաբանություն					3 (108)	2 (72)	2 (72)	2 (72)		
Ֆիզիկա						2 (72)	2 (72)	2 (72)	3 (108)	
Քիմիա							2 (72)	2 (72)	3 (108)	2 (72)
<b>Ֆիզիկական, աշխատանքային և գեղագիտական դաստիարակություն</b>										
Ֆիզիկական դաստիարակություն	3 (108)	3 (108)	3 (108)	3 (108)	2 (72)	2 (72)	2 (72)	2 (72)	2 (72)	2 (72)
Կերպարվեստ և կիրառական արվեստ, աշխատանքային ուսուցում	2 (72)	2 (72)	2 (72)	2 (72)	2 (72)	3 (36-72)	3 (36-72)	5 (60)		
Երաժշտություն	2 (72)	2 (72)	2 (72)	2 (72)	2 (72)	3 (36-72)	3 (36-72)	5 (60)		

Կամընտրական առարկաներ													
Բնական գիտությունների առարկայական խումբ	Կամընտրական առարկա (Կենսաբանություն, ֆիզիկա)											2 (72)	
	Կամընտրական առարկա (Քիմիա)											1 (36)	
	Կամընտրական առարկա (Գլոբալ հիմնախնդիրների աշխարհագրություն)											3 (108)	
Վրաստանի պատմություն, Վրաստանի աշխարհագրություն և այլ հասարակական գիտությունների առարկայական խումբ	Կամընտրական առարկա (Տնտեսագիտություն , իրավունք, պետություն և քաղաքացիություն, իրավունք )										3 (108)	3 (108)	
	Կամընտրական առարկա (երաժշտություն, կերպարվեստ և կիրառական արվեստ` գործնական դասընթաց, զժագրություն, թատերական արվեստ )										3 (108)	3 (108)	
Պարտադիր ժամերի քանակը շաբաթվա ընթացքում (Վրացալեզու մասնաճյուղի համար)		23	23	24	24		30	30	35		32	35	24-27
Պարտադիր ժամերի քանակը (Ոչ վրացալեզու մասնաճյուղի համար)		24- 27	24- 27	28- 31			33- 34	33- 34	38- 39		32- 33	37-38	26-30

- Փակագծերում նշված են տարվա ընթացքում պարտադիր հանրագումարային ժամերը:
- Կերպարվեստ, կիրառական արվեստ, աշխատանքային ուսուցումը և երաժշտությունը 8-րդ և 9-րդ դասարաններում դասավանդվում է պարտադիր առնվազն մեկ և առավելագույնը երկու եռամսյակի ընթացքում, հետևաբար՝ տրամադրվում է շաբաթը երեք ժամ: Դպրոցը վճռում է՝ ա) կամ դասավանդում է մեկ եռամսյակ կերպարվեստ, կիրառական արվեստ, աշխատանքային ուսուցում և երկու եռամսյակ երաժշտություն, բ) կամ երկու եռամսյակ կերպարվեստ, կիրառական արվեստ, աշխատանքային ուսուցում և մեկ եռամսյակ երաժշտություն կամ գ) մեկ և կես եռամսյակ կերպարվեստ, կիրառական արվեստ, աշխատանքային ուսուցումը և մեկ և կես եռամսյակ երաժշտություն:
- Քաղաքացիական կրթությունը, կերպարվեստ, կիրառական արվեստ, աշխատանքային ուսուցումը և երաժշտությունը 10-րդ դասարանում դասավանդվում է մեկական եռամսյակի ընթացքում:
- Ոչ վրացալեզու մասնաճյուղերին 2009-10 ուսումնական տարում վերաբերում են միայն I-III, VII-XII դասարանները: Այնտեղ, որտեղ նշված է երկու թիվ, օր.՝ 5-8, ենթադրվում է, որ դպրոցը ընտրում է իր համար ցանկալի ժամերի քանակը՝ նախորդ տարվա փորձի հաշվառումով:
- Կամընտրական առարկաներից բնական գիտությունների(քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն) և գլոբալ հիմնախնդիրների աշխարհագրության առարկաների ընտրությունը տեղի է ունենում միայն 12-րդ դասարանում: Մնացածների ընտրությունը հնարավոր է ինչպես 11-րդ, այնպես էլ 12-րդ դասարաններում:

**V-VI դասարանների ժամային ցանց վրացալեզու  
դպրոցների համար**  
**և IV-VI դասարանների ժամային ցանց ոչ վրացալեզու  
դպրոցների համար**

**Վրաց լեզվով ուսուցման դպրոցների համար**

<b>Դասարան</b>		<b>5</b>	<b>6</b>
1	Մայրենի լեզու	4	3
2	Մայրենի գրականություն	3	3
3	Օտար լեզու (ռուսերեն)	3	3
4	Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլ)	3	3
5	Համաշխարհային պատմություն		2
6	Վրաստանի պատմություն	2	
7	Հասարակագիտություն		
8	Վրաստանի պետության և իրավունքի հիմունքներ		
9	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա		
10	Մաթեմատիկա	4	4
11	Ֆիզիկա		
12	Քիմիա		
13	Աստղագիտություն		
14	Կենսաբանություն		1
15	Աշխարհագրություն		1
16	Վրաստանի աշխարհագրություն		
17	Բնագիտություն	1	
18	Արվեստ (կերպարվեստ)	1	1
19	Արվեստ (երաժշտություն)	1	1
20	Գծագրություն		
21	Աշխատանքային ուսուցում	1	1
22	Տնտեսագիտություն		
23	Տարրական ռազմական պատրաստություն		
24	Ֆիզիկական դաստիարակություն	2	2
<b>Պարտադիր ծանրաբեռնվածությունը</b>		<b>25</b>	<b>25</b>

Ռուսաց լեզվով ուսուցման դպրոցի համար				
Դասարան		4	5	6
1	Վրաց լեզու	3	3	3
2	Մայրենի լեզու և գրականություն	10	8	6
3	Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլ)		3	3
4	Համաշխարհային պատմություն			2
5	Վրաստանի պատմություն		2	
6	Հասարակագիտություն			
7	Վրաստանի պետության և իրավունքի հիմունքներ			
8	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա			
9	Մաթեմատիկա	5	4	4
10	Ֆիզիկա			
11	Քիմիա			
12	Աստղագիտություն			
13	Կենսաբանություն			1
14	Աշխարհագրություն			1
15	Վրաստանի աշխարհագրություն			
16	Բնագիտություն	1	1	
17	Արվեստ (կերպարվեստ)	1	1	1
18	Արվեստ (երաժշտություն)	1	1	1
19	Գծագրություն			
20	Աշխատանքային ուսուցում	1	1	1
21	Տնտեսագիտություն			
22	Տարրական ռազմական պատրաստություն			
23	Ֆիզիկական դաստիարակություն	2	2	2
<b>Պարտադիր ծանրաբեռնվածությունը</b>		<b>24</b>	<b>26</b>	<b>25</b>



Աղբրեջաներեն և հայերեն ուսուցման դպրոցների համար				
Դասարան		4	5	6
1	Վրաց լեզու	3	3	3
2	Մայրենի լեզու և գրականություն	8	7	6
3	Օտար լեզու (ռուսերեն)	2	2	2
4	Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլ)		3	3
5	Համաշխարհային պատմություն			2
6	Վրաստանի պատմություն		2	
7	Հասարակագիտություն			
8	Վրաստանի պետության և իրավունքի հիմունքներ			
9	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա			
10	Մաթեմատիկա	5	4	4
11	Ֆիզիկա			
12	Քիմիա			
13	Աստղագիտություն			
14	Կենսաբանություն			1
15	Աշխարհագրություն			1
16	Վրաստանի աշխարհագրություն			
17	Բնագիտություն	1	1	
18	Արվեստ (կերպարվեստ)	1	1	1
19	Արվեստ (երաժշտություն)	1	1	1
20	Գծագրություն			
21	Աշխատանքային ուսուցում	1	1	1
22	Տնտեսագիտություն			
23	Տարրական ռազմական պատրաստություն			
24	Ֆիզիկական դաստիարակություն	2	2	2
<b>Պարտադիր ծանրաբեռնվածությունը</b>		<b>24</b>	<b>27</b>	<b>27</b>

Օտար լեզուների խորացված ուսուցման դպրոցների համար				
Դասարան		4	5	6
1	Մայրենի լեզու	7	4	3
2	Մայրենի գրականություն		3	3
3	Օտար լեզու (ռուսերեն)	3	3	3
4	Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլ)	2	3	3
5	Համաշխարհային պատմություն			2
6	Վրաստանի պատմություն		2	
7	Հասարակագիտություն			
8	Վրաստանի պետության և իրավունքի հիմունքներ			
9	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա			
10	Մաթեմատիկա	4	4	4
11	Ֆիզիկա			
12	Քիմիա			
13	Աստղագիտություն			
14	Կենսաբանություն			1
15	Աշխարհագրություն			1
16	Վրաստանի աշխարհագրություն			
17	Բնագիտություն	1	1	
18	Արվեստ (կերպարվեստ)	1	1	1
19	Արվեստ (երաժշտություն)	1	1	1
20	Գծագրություն			
21	Աշխատանքային ուսուցում	1	1	1
22	Տնտեսագիտություն			
23	Տարրական ռազմական պատրաստություն			
24	Ֆիզիկական դաստիարակություն	2	2	2
<b>Պարտադիր ծանրաբեռնվածությունը</b>		<b>22</b>	<b>25</b>	<b>25</b>

Ռուսաց լեզվով խորացված ուսուցման դպրոցների համար՝ օտար լեզուների խորացված ուսուցումով				
Դասարան		4	5	6
1	Վրաց լեզու	3	3	3
2	Մայրենի լեզու և գրականություն	9	8	6
3	Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլ)	4	4	4
4	Համաշխարհային պատմություն			2
5	Վրաստանի պատմություն		2	
6	Հասարակագիտություն			
7	Վրաստանի պետության և իրավունքի հիմունքներ			
8	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա			
9	Մաթեմատիկա	4	4	4
10	Ֆիզիկա-աստղագիտություն			
11	Քիմիա			
13	Կենսաբանություն			2
14	Աշխարհագրություն			2
15	Վրաստանի աշխարհագրություն			
16	Բնագիտություն	1	1	
17	Արվեստ (կերպարվեստ)	1	1	1
18	Արվեստ (երաժշտություն)	1	1	1
19	Գծագրություն			
20	Աշխատանքային ուսուցում	1	1	1
21	Տնտեսագիտություն			
22	Տարրական ռազմական պատրաստություն			
23	Լրացուցիչ ժամեր մայրենի և օտար լեզուներից			
24	Ֆիզիկական դաստիարակություն	2	2	2
<b>Պարտադիր ծանրաբեռնվածությունը</b>		<b>26</b>	<b>27</b>	<b>28</b>

\* Չորրորդ դասարանի ժամերը չեն վերաբերում վրացալեզու դպրոցներին

